Հայաստանի 2012թ.-ի խորհրդարանական ընտրությունները

PFA-ի հատուկ զեկույց

Սույն զեկույցը PFA-ի անդամների համատեղ ջանքերի արդյունքն է: Դրանում արտահայտված տեսակետները անպայմանորեն չէ, որ արտահայտում են PFA-ի յուրաքանչյուր անդամի տեսակետը: Սույն զեկույցի հեղինակները կամ խմբագիրները աշխատել են անհատույց:

Դեկտեմբեր 2012թ.

© 2012 Policy Forum Armenia

Զեկույցի առանձին բաժիններ կարող են կարող են վերատպվել՝ համապատասխան թույալտվությամբ: Վերատպման դեպքում համապատասխան հղումը պարտադիր է»

,www.pf-armenia.org
forum@pf-armenia.org

Բովանդակություն

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 4

I. ՆԱԽԱԲԱՆ 6

II. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 8

III. ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ, ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ 13
Ա. Ինչ կատարվեց քվեարկության օրը 13
Բ. Հիմնական ընդդիմադիր կուսակցությունների արձագանքը 15
Գ. Միջազգային և տեղական դիտորդների արձագանքները 16

IV. ԸՆՏՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 23
Ա. Ընդհանուր նկատառումներ 23
Բ. Ընտրողների ցուցակները՝ որպես ընտրակեղծիքի հնարավոր աղբյուր .24
Գ. Ընտրակեղծիքներ ընտրությունների մասնակիցների թիվը ուռճացնելու միջոցով 30
Դ. Թվային թեսթեր 33
Ե. Ով է շահել ընտրակեղծիքների արդյունքում 37

V. Եզրահանգումներ եվ առաջարկություններ 40
Առաջարկություններ 42

Աղյուսակներ

Աղյուսակ 1. Խորհրդարանական խմբակցությունները խառը և ամբողջովին համամասնական ընտրակարգերի պայմաններում..... **Error! Bookmark not defined.**
Աղյուսակ 2. iDitord առցանց հարթակում գրանցված ընտրախախտումները.**Error! Bookmark not d**
Աղյուսակ 3. Նոր զուտ ընտրելու իրավունք ունեցողների թվի աճը 2008 և 2012թթ. ընտրությունների միջակայքում (‘000-ով) ..... **Error! Bookmark not defined.**

Գծապատկերներ

Գծապատկեր 1.Խորհրդարանական տեղերի թիվը՝ ըստ տարբեր ընտրակարգերի 1990թ.-ից ի վեր..... **Error! Bookmark not defined.**
Գծապատկեր 2. Բնակչության թիվը, ընտրելու իրավունք ունեցող անձինք և ընտրական մասնակցությունը ..... **Error! Bookmark not defined.**

Գծապատկեր 3: Նախորդ համապետական ընտրությունների մասնակցության հաճախականությունը (2007, 2008 և 2012թթ.).....**Error! Bookmark not defined.**
Գծապատկեր 4. Վերջին նիշերի բաշխումն ըստ ենթախմբերի (խորհրդարանական ընտրություններ 2012)
.....**Error! Bookmark not defined.**
Գծապատկեր 5. Կուսակցության քվեների և մասնակիցների հարաբերակցությունը
.....**Error! Bookmark not defined.**

Հավելվածներ
Հավելված I: Ընտրակարգեր.....44
Հավելված II: Հայտնի ակտիվիստների՝ թանաքի թերությունները հետ կապված զեկույցները սոցիալական մեդիայում .....**Error! Bookmark not defined.**
Հավելված III: Դիտորդների ազդեցության տնտեսաչափական գնահատում 48

Հղումներ.....**Error! Bookmark not defined.**

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2012թ.-ի մայիսի 6-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքում Հայաստանի հանրապետական կուսակցությունն էլ ավելի ամրապնդեց իշխանության նկատմամբ իր վերահսկողությունը՝ ձեռք բերելով ձայների բացարձակ մեծամասնություն (69 տեղ 131-ից): Ընդդիմադիր երեք կուսակցությունները/դաշինքները միասին ստացան 17 տեղ՝ հազիվ հատելով անցողիկ շեմը: Մնացյալ ձայների զգալի մասն ստացան իշխող կոալիցիայի անդամները՝ Բարգավաճ Հայաստան և Օրինաց երկիր կուսակցությունները: Մինչ դիտորդներն արձանագրել են դրական առաջընթաց ընտրությունների անցկացման գործընթացում, առկա են լուրջ ապացույցներ, որոնք վկայում են այն մասին, որ ընտրակեղծիքները չեն վերացել, այլ վերաճել և դարձել են պակաս ակնհայտ և դիտարկելի՝ սակայն մնացել են նույնքան արդյունավետ ընտրությունների հատուկ կանխորոշված արդյունք ապահովելու տեսանկյունից: Այս երևույթն ավելի ու ավելի մեծ տարածում է գտնում տարածաշրջանում, ինչպես նաև ավտորիտար կառավարում ունեցող այլ պետություններում:

Սույն զեկույցն անդրադառնում է 2012թ.-ի նախորդող ժամանակահատվածում տեղի ունեցած տնտեսաքաղաքական և օրենսդրական զարգացումներին և ամփոփում է հիմնական շահագրգիռ կողմերի՝ ընդդիմադիր կուսակցությունների, միջազգային դիտորդների և քաղաքացիական հասարակության խմբերի արձագանքներն ընտրությունների արդյունքներին: Եվ որ ավելի կարևոր է, զեկույցը ներառում է մի շարք վիճակագրական թեսթեր, որոնք թույլ են տալիս ապացուցել ընտրակեղծիքների առկայությունը և բացահայտել այդ անօրինական գործելակարգի հիմնական շահառուներին:

Մասնավորապես, զեկույցում արձանագրված է հետևյալը.

- *Ընտրողների ցուցակները վերջին համապետական ընտրություններում չեն արտացոլում Հայաստանի զանգվածային արտագաղթը:*
- *Ընտրությունների մասնակիցների պաշտոնական թիվը վերջին ընտրությունների ժամանակ գերազանցել է բոլոր ողջամիտ կանխատեսումներն առնվազն 370,000-ով կամ ընդհանուր թվի 30 տոկոսով:*
- *Մինչ արհեստականորեն ուռճացրած մասնակցությունը 2012թ.-ին մեծապես աճել է վերջին համապետական ընտրությունների համեմատ (2007թ.-ի համեմատ պակաս, սակայն 2008թ.-ի համեմատ ավելի)՝ այս արդյունքին հասնելու հիմնական մեխանիզմը փոխվել է՝ քվեատուփի լցոնումից վերափոխվելով բազմակի և արհեստական քվեարկության:*

- *Համաձայն միջազգային դիտորդների (և այլ ականատեսների) վկայությունների՝ ընտրակեղծիքների դեպքերն ընտրատեղամասերից դուրս (օրինակ՝ ընտրակաշառքը և ահաբեկումը) ավելացել են՝ փոխարինելով ընտրատեղամասերի ներսում տեղի ունեցող ապօրինի գործողություններին (օրինակ՝ քվեատուփերի լցոնում):*

- *Վիճակագրորեն նշանակալի փաստարկներ կան այն մասին, որ ձայների հաշվարկը Երևանից դուրս գտնվող ընտրատեղամասերում տեղի է ունեցել խախտումներով:*

- *Մասնակցության ուռճացման հանգեցնող ընտրակեղծիքի հիմնական շահառուն Հայաստանի հանրապետական կուսակցությունն է:*

- *2003 և 2008թթ.-ի միջազգային դիտորդների ներկայությունը վիճակագրորեն նշանակալիորեն նվազեզրել է ընտրակեղծիքներն այդ ընտրատեղամասերում:*

Վերջապես, սույն զեկույցը պարունակում է եզրահանգումներ և առաջարկություններ՝ ուղղված ընդդիմադիր կուսակցություններին, քաղաքացիական հասարակությանը, դիտորդներին և Սփյուռքին:

I. ՆԱԽԱԲԱՆ

2012թ.-ի մայիսի 6-ին Հայաստանի քաղաքացիները բռնեցին ընտրատեղամասերի ճանապարհը՝ ընտրելու նոր խորհրդարան: Հաջորդ օրը ընտրություններում հաղթող հռչակվեց Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) ՝ համամասնական ընտրակարգով ընտրություններում ստանալով ձայների 44 տոկոսը: Դրան հավելելով մեծամասնական ընտրակարգով ընտրություններում հաղթած տեղերը՝ կուսակցությունը ստացել էր 69 տեղ, ինչը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի (ԱԺ) 131 տեղերի բացարձակ մեծամասնությունն է: Իշխող կոալիցիայի գործընկեր Բարգավաճ Հայաստան կուսակցությունը երկրորդ տեղում էր՝ ստանալով ձայների 30 տոկոսը, այն է՝ 37 տեղ խորհրդարանում: Մնացած 25 տեղերից 23-ը բաշխվել էին չորս կուսակցությունների/դաշինքների (որոնք հազիվ են հաղթահարել տոկոսային արգելքը) և 2 անկախ թեկնածուների միջև[1]:

Հայաստանի քաղաքական բարձրագույն ղեկավարության կողմից տված ազատ և արդար ընտրություններ անցկացնելու մասին խոստումները՝ վերածվեցին խորապես արատավոր մի գործընթացի, ինչը հանգեցրեց այս արդյունքին: Չնայած այն բանի որ մինչ այսօր շարունակվում են տարաձայնությունները քվեարկության օրն ընտրության ազատ և արդար լինելու աստիճանի մասին, տեղի ունեցածը հասարակության մի զգալի հատվածի շփոթության մատնեց: Ի վերջո, բացարձակ հաղթող հռչակված կուսակցության կառավարման տարիներին են արձանագրվել 1994թ.-ից ի վեր գրանցված վատագույն մակրոտնտեսական ցուցանիշները և սոցիալական պայմանները[2], ներքաղաքական աճող բևեռացումը հաղթահարելու ձախողումը և պետության առջև տևական ժամանակ ծառացած արտաքին մարտահրավերներին պատշաճ լուծումներ առաջարկելու անկարողությունը:

---

[1] Ի լրումն ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի՝ ընտրություններին մասնակցող կուսակցություններն էին Հայաստանի ազգային կոնգրեսը (ՀԱԿ), Հայ յեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ), «Ժառանգություն» կուսակցությունը, «Օրինաց երկիր» կուսակցությունը (ՕԵԿ), և «Միավորված հայեր» կուսակցությունը: Շեմը հաղթահարած կուսակցություններն էին ԲՀԿ-ն, Ժառանգությունը, ՀԱԿ-ը, ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն, և ՕԵԿ-ը: Հետաքրքիր է, որ ՕԵԿ-ը, «Միավորված հայերը» և ՀԿԿ-ն ստացան ավելի քիչ թվով ձայներ, քան նրանց կողմից հայտարարագրված անդամների թիվն էր: 2012թ. դրությամբ Հայաստանում գրանցված են ընդհանուր թվով 71 քաղաքական կուսակցություններ՝ համեմատած 2007թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ գրանցված 75-ի հետ:

[2] PFA-ի զեկույցը՝ «Հայաստան. Կանխելով տնտեսական աղետը» (այսուհետ՝ PFA, 2012թ.) ամենայն մանրամասնությամբ անդրադառնում է Հայաստանի տնտեսական ցուցանիշներին ներկայիս վարչակարգի իշխանության ժամանակաշրջանում:

Ինչպես նշում է Շեդլերը (Schedler, 2002). «ընտրությունները, որոնք սովորաբար համարվում են ժողովրդավարության տարբերանշան, կարող են նաև դառնալ իրենց իշխանությունը լեգիտիմացնելու նպատակ հետապնդող բռնապետների գործիքը»: «Կառավարվող ժողովրդավարության» մոդելի պարագայում (օրինակ՝ Ռուսաստանի) ընտրական ինստիտուտների նկատմամբ ուժեղ հսկողությունը դառնում է իշխանության մնալու բռնապետերի հիմնական միջոցը: Մինչ ընտրակեղծիքներն ուղղակիորեն հնարավորություն են տալիս ռեժիմի թեկնածուին ընտրվելու, դրանք նաև անուղղակի, հոգեբանական ազդեցություն են ունենում երկրի ազգաբնակչության վրա՝ ընտրակեղծիքների, ահաբեկման և բռնության տեսքով, որոնք հաճախ օգտագործվում են ինքնավստահություն և գործընթացը վերահսկելու կարողություն ազդարարելու համար (IFES, 2012թ.): Այս երկուսը հաճախ փոխամրապնդող են դառնում:

Ինչպես 1991թ.-ի Հայաստանի անկախությունից ի վեր անցկացվող յուրաքանչյուր ընտրություն, 2012թ.-ի մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները ևս նշանավորվեցին իրավախախտումներով և համակարգային ընտրակեղծիքներով: Այդուհանդերձ, ինչպես նշել են դիտորդները, այս ընտրություններն ավելի հանգիստ էին և արձանագրել են պակաս թվով *հաղորդումներ* ընտրախախտումների մասին, քան ոչ հեռավոր անցյալի համապետական ընտրությունները: Այդուհանդերձ, շատ վերլուծաբաններ այն համոզմանն են, որ ընտրակեղծիքները չեն վերացել, այլ պարզապես ընդունել են այլ ձևեր: Դրանք դարձել են պակաս ակնառու և դիտարկելի, սակայն մնացել են նույնքան արդյունավետ ընտրություններին հստակ կանխորոշված արդյունք ապահովելու տեսանկյունից: Հաշվի առնելով խախտումների և ընտրակեղծիքների աստիճանը՝ շատերը տարակուսում են, թե կարո՞ղ է արդյոք Հայաստանի ընտրական համակարգը երբևէ վերականգնել իր լեգիտիմությունը հանրության աչքում: Կարո՞ղ է արդյոք երկրում իրականացվել լուրջ բարեփոխումների օրակարգ, եթե հանրության վստահությունը կառավարության և ինստիտուտների հանդեպ այդքան ցածր է[3]:

Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի կողմից վերջերս հրապարակված վերլուծությունը՝ կատարված Վիքերիի և Շայնի կողմից (Vickery and Shein, 2012), բնորոշում է ընտրակեղծիքը որպես *«դիտավորությամբ կատարված իրավախախտում ընտրական գործընթացի պաշտոնատար անձանց կողմից, որն աղավաղում է ընտրողների անհատական կամ հավաքական կամքը»*: Սույն զեկույցը ցույց է տալիս, որ այն ինչ կատարվեց Հայաստանում 2012թ.-ի մայիսի 6-ին, համապատասխանում է ընտրակեղծիքի վերոհիշյալ սահմանմանը:

---

[3] ՎՀԵԲ-ի "Կյանքն անցումային ժամանակաշրջանում" զեկույցը գնահատում է Հայաստանի պետական ինստիտուտների հանդեպ վստահությունն ամենացածրը Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության անցումային պետությունների շրջանում:

Զեկույցում դա արվում է ընտրությունների պաշտոնական տվյալների վիճակագրական վերլուծության միջոցով, որին լրացնում են անճշտությունների մասին այլ ապացույցներ: Բարեբախտաբար ինտերնետի դարաշրջանում այս ապացույցների մեծ մասը հրապարակային է, իսկ դրանց հավաքումն ու հաղորդումը հաճախ կատարվում է իրական ժամանակում:

Զեկույցն ունի հետևյալ կառուցվածքը. Գլուխ II-ը ներկայացնում է տնտեսաքաղաքական և օրենսդրական զարգացումները 2012թ.-ի ընտրություններին նախորդող ժամանակահատվածում: Գլուխ III-ն ամփոփում է ընդդիմադիր կուսակցությունների, միջազգային դիտորդների և քաղաքացիական հասարակության խմբերի արձագանքները ընտրությունների անցկացման և արդյունքների վերաբերյալ: Գլուխ IV-ը ներկայացնում է ընտրակեղծիքների որոշ տեսակներ բացահայտող վիճակագրական թեսթեր և ապացույցներ առ այն, թե որ կուսակցությունն է շահել այդ ընտրակեղծիքներից: Վերջապես, գլուխ V-ը եզրափակում է վերլուծությունն ու ներկայացնում առաջարկություններ հիմնական շահագրգիռ խմբերին:

II. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Օրենսդրություն

2008թ.-ի քաղաքական ճգնաժամից հետո, որը հետևեց նախագահական ընտրություններին և խլեց 10 քաղաքացու կյանք, իշխող կոալիցիայի անդամ կուսակցությունները (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, և ՀՅԴ)[4] առաջարկեցին նոր ընտրական օրենսգիրք՝ որպես Հայաստանում ընտրական գործընթացները բարելավելու և ընտրությունների նկատմամբ վստահությունը (որն այդ ժամանակ ամբողջովին վերացել էր) բարձրացնելու միջոց: Այդուհանդերձ, պարզ էր, որ անկախ Հայաստանի պատմության մեջ թերևս վատագույն ընտրությունների պատճառն ընտրական օրենսդրության թերությունները չէին, այլ այդ օրենսդրությունը կիրառելու քաղաքական կամքի բացակայությունը[5]: Ի վերջո 1999թ.-ին ընդունված ընտրական օրենսգիրքը տասնհինգ անգամ փոփոխության էր ենթարկվել նախքան 2011թ.-ի մայիսի նոր օրենսգրքի ընդունումը: Օրենսգրքի կիրառման փոխարեն այն փոփոխելու վրա կենտրոնանալը հստակ ազդանշան էր, որ շատ

---

[4] ՀՅԴ-ն մնաց իշխող կոալիցիայում մինչև 2009թ. ապրիլի 27-ը:

[5] Այս մտահոգությունը հստակորեն արտահայտվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընտրությունների դիտարկման առաքելության վերջնական զեկույցում, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքում: Տես նաև PFA (2008) 2008թ. ընտրությունների և դրանց նախորդած իրադարձությունների մանրամասն նկարագրության համար:

քիչ բան է փոխվելու (կամ ընդհանրապես ոչինչ չի փոխվելու) խնդրի արմատական պատճառները վերացնելու հարցում իշխանության ունեցած մոտեցման մեջ:

Ընտրական բարեփոխումների վերջին փուլը սկսվել է 2008թ.-ի Հունիսին՝ ԱԺ-ում հատուկ աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով: Մինչ աշխատանքային խումբը մի քանի ամիսների ընթացքում մշակել էր մի շարք առաջարկություններ, իշխող կոալիցիան մինչև 2010թ.-ի վերջը շրջանառության մեջ չդրեց նոր ընտրական օրենսգրքի նախագիծը: Չնայած նախագիծը պարունակում էր որոշ բարելավումներ նախընտրական քարոզչության ընթացակարգերի, նախընտրական քարոզչության ֆինանսավորման և բողոքարկման ընթացակարգերի ոլորտում, այն չէր անդրադառնում այնպիսի լրջագույն հարցերի, ինչպիսիք էին ընտրողների ցուցակների կազմումը, հավասարակշռված ընտրական հանձնաժողովների կազմավորումը և վարչական ռեսուրսի չարաշահումը:

Խորհրդարանական ընդդիմությունը (Ժառանգությունը և ՀՅԴ-ն) արձագանքեցին օրենսգրքին՝ ներկայացնելով ընտրական օրենսգրքի իրենց տարբերակը: Սակայն երբ պարզ դարձավ, որ իշխող կոալիցիան վճռական է իր տարբերակն անցկացնելու հարցում, ընդդիմությունն սկսեց ճնշում գործադրել, որպեսզի որոշ դրույթներ այդուհանդերձ ընդունվեն: Այս ջանքերն ամեն դեպքում հաջողությամբ չպսակվեցին[6]: Կոալիցիոն կուսակցությունների անդամ պատգամավորների համահեղինակած նախագիծը 2011թ.-ի մայիսի 26-ին ընդունվեց 75 «կողմ» և 14 «դեմ» ձայնով: Եվ մինչ օրենսգրքի որոշ դրույթների շուրջ քննարկումներն աշխուժացան դրա ընդունումից հետո, խորհրդարանական ընդդիմությունը կենտրոնացավ միայն հետևյալ երկու թեմաների վրա՝

- ընտրություններից հետո ընտրողների ցուցակների հրապարակում (բացակա անձանց կողմից ընտրելու հնարավորությունը վերացնելու համար) և
- անցումը 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի (ընտրողների քաղաքական նախընտրությունների լիակատար իրականացումն ապահովելու և օլիգարխների ու տեղական հեղինակությունների ազդեցությունը վերջնարդյունքի վրա սահմանափակելու համար):

---

[6] Այդ ժամանակվա թերևս ամենակազմակերպված ընդդիմադիր ուժը՝ ՀԱԿ-ը, ցանկություն չարտահայտեց նախքան օրենսգրքի ընդունումը որևէ կերպ ներգրավվելու դրա վերաբերյալ կազմակերպված քննարկումներում:

Ընտրողների ցուցակները

Ընտրողների ցուցակներն առնվազն 2003թ.-ից ի վեր մտահոգության առարկա են եղել թե՛ Հայաստանի կուսակցությունների և թե՛ միջազգային կազմակերպությունների համար: Ի հեճուկս այն փաստի, որ որոշ առումներով ընտրողների ցուցակների կազմումն ու վարումը բարելավվել է 2005թ.-ից ի վեր, երբ ոստիկանությունն է դարձել ընտրողների միասնական ցուցակ վարող պատասխանատու մարմին, դրանց ճշգրտությունը դեռևս լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: 2007թ.-ի ընտրական օրենսգրքի փոփոխություններից մեկն էլ այն էր, որ օրենսդիրն արգելեց միջազգային պետություններում գտնվող քաղաքացիներին Հայաստանի դեսպանատներում քվեարկել, ինչի արդյունքում արտասահմանում բնակվող, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող հարյուր հազարավոր անձինք զրկվեցին քվեարկելու հնարավորությունից[7]: Այդ «բացակա ընտրողների» առկայությունն էր, որ էապես կրճատեց քվեարկելու իրավունք ունեցող անձանց իրական թիվը, և ինչպես ներկայացվում է Գլուխ IV-ում, ենթադրում է ընտրություններին մասնակցած անձանց անհավանականորեն մեծ թիվ[8]:

Բացակա անձանց անունների օգտագործումը թույլ չտալու նպատակով ընդդիմադիր կուսակցությունները պահանջում էին ընտրական օրենսգրքից հանել այն դրույթը, որն արգելում է ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակումը: Այս պահանջը մերժվեց այն պատճառաբանությամբ, որ այն կխախտի ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը, որը երաշխավորված է Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի միջազգային պարտավորություններով: Այդուհանդերձ, որոշ դրույթներ ներառվեցին օրենսգրքում՝ փարատելու ընդդիմության մտահոգությունները: Մասնավորապես, ընդդիմության ներկայացուցիչներին երաշխավորվեցին տեղեր քվեարկության սենյակում, ինչը թույլ կտար նրանց մշտադիտարկման ենթարկել քվեարկության գործընթացը, այդ թվում՝ հատուկ թանաքով քվեարկողների անձնագրերը դրոշմակնքելը[9]: Ի լրումն դրա՝ կրկնակի քվեարկության համար նախատեսվեցին

---

[7] Այդուհանդերձ, օրենսգիրքը հնարավորություն է ընձեռում արտերկրում գտնվող դեսպանատան աշխատակիցներին և նրանց ընտանիքների անդամներին քվեարկելու էլեկտրոնային եղանակով:

[8] 2008թ. նախագահական թեկնածու Արման Մելիքյանը նախքան 2008թ. ընտրությունները դիմել էր Սահմանադրական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել այդ փոփոխությունը՝ փաստարկելով, որ ընտրողների պաշտոնական թիվը ենթադրում է 90 տոկոսանոց մասնակցություն, եթե հաշվարկվի Հայաստանում ֆիզիկապես գտնվող և քվեարկելու իրավունք ունեցող անձանց կտրվածքով: Տես «Արման Մելիքյանը պատրաստ է բանավիճել երեք քաղաքական ուժերի հետ» *Ա1+*, 5-ը փետրվարի, 2008թ.

[9] Անձնագրերի դրոշմակնիքների ներդրումը հատուկ /ժամանակավոր/ թանաքի օգտագործմամբ նախատեսված էր որպես քվեարկության օրը բազմակի քվեարկությունները կանխելու միջոց, սակայն այն նաև օգտագործվում էր քվեարկության գաղտնիության սկզբունքը պահպանելու

(continued)

առավել խիստ պատիժներ: Այդուհանդերձ, ընդդիմախոս կուսակցությունները բավարարված չէին: ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն և ԲՀԿ-ն միասին դիմեցին Սահմանադրական դատարան՝ պահանջելով վերացնել ընտրողների ցուցակների հրապարակման արգելքը, ինչը մերժվեց Սահմանադրական դատարանի կողմից[10]:

Ամբողջովին համամասնական ընտրակարգ

Ամբողջովին համամասնական ընտրակարգի ներդրումը մնում է խիստ կարևոր հարց կուսակցությունների համար և օրակարգում է 1995թ. ի վեր: (I-ին հավելվածում ամփոփ ներկայացված են ինչպես համամասնական, այնպես էլ մեծամասնական ընտրակարգերի բնութագրիչները): Այդ ժամանակից ի վեր համարվել է, որ անցումն ամբողջովին համամասնական ընտրակարգի պարզապես ժամանակի հարց է (Գծապատկեր 1): Այդուհանդերձ, նոր ընդունված ընտրական օրենսգրքում համամասնական ընտրակարգով տեղերի համամասնությունը չի փոխվել:

Գծապատկեր 1. Խորհրդարանական տեղերի թիվը՝ ըստ տարբեր ընտրակարգերի 1990թ. ի վեր



	1990	1995	1999	2003	2007	2012
FPTP	260	150	75	75	41	41
PR	0	40	56	56	90	90

FPTP=Մեծամասնական, PR=Համամասնական

նպատակով, քանի որ նախատեսվում էր, որ հատուկ թանաքը մի քանի ժամ անց կցնդի: Այդուհանդերձ, ինչպես ներկայացվում է ստորև, քվեարկության օրը անձնագրերի դրոշմակնիքներն անհետանում էին հաշված րոպեներ, այլ ոչ՝ ժամեր անց: Արժանահիշատակ է, որ երբ խնդրի մասին սկսեցին լայնորեն բարձրաձայնել, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) հանձնարարեց տեղամասային հանձնաժողովներին օգտագործել սովորական թանաք, ինչով խախտվեց ընտրողների գաղտնիության իրավունքը:

[10] Սահմանադրական դատարանի 2012թ. մայիսի 5-ի որոշմանը կարելի է ծանոթանալ այստեղ (հայերեն):

2012թ.-ի ընտրությունների նախօրեին այս հարցը դարցավ ընտրական օրենսգրքի շուրջ ծավալվող քննարկումների անկյունաքարը: 2011թ.-ի դեկտեմբերի 27-ին տարածված հայտարարության մեջ ՀՅԴ-ն և "Ժառանգությունը" առաջարկեցին անցնել ամբողջովին համամասնական ընտրակարգի: Հայտարարությունը պաշտպանեցին ՀԱԿ-ը, ԲՀԿ-ի որոշ ներկայացուցիչներ, ինչպես նաև մի շարք այլ փոքր քաղաքական կուսակցություններ: ԲՀԿ-ի աջակցությամբ այս առաջարկությունը քննարկվեց խորհրդարանի լիազումար նիստում: ՀՀԿ-ն դեմ էր այդ առաջարկությանը և ՕԵԿ-ի հետ միասին թույլ չտվեց, որպեսզի օրինագիծն ընդունվի[11]: ՀՀԿ-ն չցանկացավ անգամ քննարկել ներկայիս 90/41-ի փոխարեն կոնսենսուսային 120/11 կամ 110/21 համամասնական/մեծամասնական մանդատներ ունենալու առաջարկությունները:

Հետադարձ հայացքով, հասկանալի է, որ եթե առաջարկությունն ընդունվեր, այն շոշափելի քաղաքական հետևանքներ կունենար: Ինչպես ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 1- ում, եթե ընտրություններն անցկացվեին ամբողջովին համամասնական ընտրակարգով, ՀՀԿ-ն ԱԺ-ում չէր ունենա բավարար թվով ձայներ կառավարություն կազմավորելու համար, եթե անգամ ՀՀԿ-ն կոալիցիա կազմեր ՕԵԿ-ի հետ. այս կոալիցիան կունենար ընդամենը 65 տեղ: Մնացած չորս խմբակցությունները՝ Ժառանգությունը, ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը և ՀՅԴ-ն, կստանային տեղերի մեծամասնությունը՝ 66 տեղ: Չնայած այս դեպքում ՀՀԿ-ԲՀԿ կոալիցիան կլիներ առավել հավանական արդյունքը, հաշվի առնելով նրանց կոալիցիոն գործընկերության նախապատմությունը և այդ սիմբիոզը պահպանելու շահագրգռությունը՝ ՀՀԿ-ն ստիպված կլիներ բաժանելու քաղաքական իշխանությունն այլ դերակատարների հետ[12]:

---

[11] Հետաքրքրարժան է, որ անցումը 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի ՕԵԿ-ի կուսակցական ծրագրի մասն էր:

[12] Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման ընթացքում ձևավորված և նրա մտահղացումը հանդիսացող ԲՀԿ-ն վերջինիս պաշտոնից հեռանալուց հետո մնում է նրա հիմնական քաղաքական հենարանը: Կուսակցության *de jure* առաջնորդ Գագիկ Ծառուկյանը, որը Հայաստանի ամենաունևոր օլիգարխն է, այս կառույցի, որի կազմում են նաև այլ օլիգարխներ, հիմնական ֆինանսական մկանն է: Կուսակցությունը ներկայումս իշխող ՀՀԿ-ի հետ չունի որևէ լուրջ գաղափարական տարբերություն և մեծապես շահել է իշխանության բաժանման տևական ժամանակ գործող մեխանիզմից:

Աղյուսակ 1. Խորհրդարանական խմբակցությունները խառը և ամբողջովին համամասնական ընտրակարգերի պայմաններում

	Քաղաքական կուսակցությունները					
	ԲՀԿ	Ժառ	ՀԱԿ	ՀՅԴ	ՀՀԿ	ՕԵԿ
Պատգամավորների ներկայիս թիվը խմբակցություններում	37	5	7	5	69	6
Պատգամավորների թիվը, եթե արդյունքները հաշվարկվեին 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգով	40	8	10	8	58	7
Տարբերությունը, ավելի(+)/պակաս(-)	3	3	3	3	-11	1

Ծոնթագրություն. թվերը ներկայացված են 2012թ. հունիսի դրությամբ: Ներկայումս երկու մեծամասնական տեղ թափուր է, և 2012թ. դեկտեմբերին նշանակված են երկու լրացուցիչ ընտրություններ: 2007թ. խորհրդարանի կազմին կարելի է ծանոթանալ այստեղ.

III. ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ, ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Ա. Ինչ կատարվեց քվեարկության օրը

Մեր թիմն ուսումնասիրել է տասնյակ ականատեսների՝ ընտրողների և վստահված անձանց կողմից հրապարակված տեղեկություններ և վկայություններ, որոնք ցույց են տալիս, որ քվեարկության օրը տեղի են ունեցել բազմաթիվ ապօրինություններ, որոնք ամփոփ ներկայացվում են ստորև.

Ընտրությունների ժամանակ հաղորդված ընտրակեղծիքների հիմնական տեսակները

- Ճնշումներ, ընտրողների ահաբեկում և ֆիզիկական ուժի գործադրում,
- Ընտրակաշառքի համատարած բաժանում,
- Բազմակի և արհեստական քվեարկության[13],

[13] Վերջինս իրականացվում է կեղծ անձնագրերի օգտագործման և հավատարիմ անձանց խմբի միջոցով:

- Վերահսկվող քվեարկություն[14] և
- Վարչական ռեսուրսի և պաշտոնական դիրքի չարաշահում:

Դիտարկված այլ գործողություններ, որոնք ընտրակեղծիքներ կատարելու կամ դիտորդությունը և հաղորդումները կանխարգելելու նպատակ են հետապնդել

- Անհետացող թանաք (տես հավելված II),[15]
- Չլիազորված անձինք ընտրական տեղամասերում,
- Քվեաթերթիկները տպագրվել են ՀՀԿ-ի թեկնածուին պատկանող ընկերության կողմից,
- Անցյալում ընտրակեղիծքների համար դատապարտված անձինք ծառայել են որպես ընտրական հանձնաժողովների անդամներ և
- Հարձակումներ լրագրողների վրա, որոնք լուսաբանում են ընտրությունները:

Այս ապօրինի գործողություններից շատերը նկարագրված են Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում: Դրանք նաև ներկայացված են «Ժառանգություն» կուսակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանի կողմից վերջերս արված հայտարարության մեջ: Ի լրումն սրա՝ iDitord (տես Աղյուսակ 2-ը ստորև) և «Թրենսփերենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի ընտրությունների կայքերը պարունակում են բազմաթիվ տեղեկություններ և նախնական վերլուծություն[16]: Ի վերջո, միջազգային լրատվամիջոցները և միջազգային դիտորդները նույնպես վկայում են, որ այս դիտարկումները համապատասխանում են իրականությանը[17]:

---

[14] Արվում է "կարուսելի," գունավոր գրիչների և նմանատիպ այլ մեխանիզմների միջոցով:

[15] ԿԸՀ-ի սկզբնական արձագանքը անհետացող թանաքի մասին լուրերին հետևյալն էր. "Ավելի լավ թափահարեք այն!"

[16] Ա1+ ինտերնետային հեռուստաընկերության կողմից կազմակերպված քննարկման տեսաձայնագրությունը բացահայտում է ընտրությունների ժամանակ կատարված ապօրինությունները և ընտրակեղծիքները:

[17] Սրա լավագույն օրինակներն են The Weekly Standard, BBC News, և IWPR –ի հրապարակված հոդվածները:

Աղյուսակ 2. iDitord առցանց հարթակում գրանցված ընտրախախտումները

Խախտումների տեսակները	Ընտրախախտ. Թիվը	Ամբողջի տոկոսը
Ընտրակաշառք և ահաբեկում	284	21.9
որից ընտրակաշառք և բարեգործ.	*247*	*19.0*
Ընտրողների ցուցակներ	151	11.6
Նախընտրական քարոզչություն	175	13.5
Ընթացակարգային խախտումներ	182	14.0
Քվեարկության օրվա կեղծիքներ,	78	6.0
որից քվեատուփի լցոնում	*11*	*0.8*
Հասարակական կարգ,	161	12.4
որից բռնություն և ճնշումներ	*53*	*4.1*
Այլ	266	20.5

Աղբյուրը՝ iDitord ընտրակեղծիքների առցանց հարթակ

2-րդ աղյուսակի հետ կապված հետաքրքիր դիտարկումներն են.

(i) ընտրակաշառք բաժանելու դեպքերի բարձր հաճախականությունը (հաղորդած հինգ դեպքից մեկը) և
(ii) քվեատուփերի լցոնման դեպքերի ցածր հաճախականությունը (հաղորդած հարյուր դեպքից մեկից էլ քիչ):

Անշուշտ, 2008թ.-ի նախագահական ընտրությունների ժամանակ այս երկուսը առավել դիտարկված ընտրակեղծիքներն էին[18]: Ընտրական չարաշահման մի տեսակից մյուսին անցնելու մասին են վկայում նաև ստորև ներկայացված այլ ապացույցներ:

Բ. Հիմնական ընդդիմադիր կուսակցությունների արձագանքը

Մինչ ՀՀԿ-ն գովանաբում էր ընտրությունների անցկացումն ու արդյունքները, ընդդիմադիր կուսակցությունների կարծիքն այլ էր: Մասնավորապես, «Ժառանգություն» կուսակցության ընտրական շտաբը տարածեց հետևյալ հայտարարությունը.

[18] Տես PFA-ի (2008), 2008թ. նախագահական ընտրությունների ընթացքում դիտարկած ընտրակեղծիքների ամփոփման համար:

««Ժառանգություն» կուսակցության նախընտրական շտաբն արձանագրում է, որ ս.թ. մայիսի 6-ին Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները մթագնված են բազմաթիվ ընտրախախտումներով: Այսպես՝ ընտրակաշառքների և կեղծ բարեգործությունների ծավալները հասան աղաղակող չափերի, որոնք Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ աննախադեպ բարձր ազդեցություն ունեցան ընտրությունների արդյունքների վրա»:

Ընտրություններից հետո ՀՅԴ-ի տարածած հայտարարության մեջ ասվում էր.

«Պարզ էր, որ ընտրակեղծիքները նախապես պլանավորված էին և տեղի են ունեցել ընտրական տեղամասերից դուրս մայիսի 6-ին, ինչպես նաև դրան նախորդած օրերի ընթացքում: Իշխող կուսակցության անդամներն արձանագրել են բարձր թվեր հիմնականում պետական և վարչական լծակների կատարյալ օգտագործման, ինչպես նաև աննախադեպ մեծ ֆինանսական ռեսուրսների պատճառով, որոնք օգտագործվել են որպես ընտրակեղծիքների միջոց: Ապացույցներն անհերքելի են, որ կոռուպցիան իր կործանարար ազդեցությունն է ունեցել ընտրությունների արդյունքների վրա»:

Վերջապես, ՀԱԿ-ի հայտարարությունը հետևյալ կերպ բնորոշեց ընտրությունները.

«2012 թ.-ի մայիսի վեցը հայերի ազատ կամաարտահայտության և ժողովրդավարության հաղթանակի օրը դառնալու փոխարեն՝ նշանավորվեց ընտրախախտումների աննախադեպ ծավալներով, որոնք ի կատար ածեց պետությունը խորհրդարանական ընտրությունները կեղծելու նպատակով[19]»:

Գ. Միջազգային և տեղական դիտորդների արձագանքները

Մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները դիտարկել են մեծ թվով դիտորդներ [20]: Ստորև ներկայացված են նրանց բացահայտումները:

---

[19] Ինչպես նշված է հետևյալ զեկույցում.

[20] Համաձայն Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ)՝ ԿԸՀ-ն հավատարմագրել էր դիտորդներ 10 միջազգային կազմակերպություններից և 54 տեղական ՀԿ-ներից (ընդհանուր առմամբ՝ 27,141 դիտորդ): Գրանցված ՀԿ-ներից միայն չորսն են կազմել հետընտրական զեկույցներ իրենց բացահայտումների մասին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հանդես էր գալիս

(continued)

2012թ.-ի հունիսի 26-ին հրապարակված վերջնական զեկույցում, ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ընդգծել է, որ ընտրություններն արձանագրել են որոշ դրական տեղաշարժեր՝ տալով հետևյալ բնորոշումը. «մրցակցային, աշխույժ և հիմնականում խաղաղ նախընտրական քարոզարշավ, որը, այդուհանդերձ, նշանավորվեց վստահության ցածր մակարդակով գործընթացի արժանահավատության նկատմամբ»: Զեկույցում բացթողումների թվում հիշատակվում են վարչական ռեսուրսի օգտագործումը, քվեարկողների ազատ կամաարտահայտությունը սահմանափակելու փորձերը, քվեարկության օրն ընտրությունների գործընթացին անտեղի միջամտության դեպքերը և կազմակերպչական թերացումները: Մինչ ճանաչվել է, որ ընտրական օրենսգրքի որոշ դրույթներ դրական են, նշվել է, որ դրանց կիրարկումը մտահոգության տեղիք է տալիս: Ինչ վերաբերում է ընտրողների ցուցակների ճշգրտությանը, զեկույցում նշված է, որ. «պահանջվում են լրացուցիչ ջանքեր և ավելի լավ համակարգում կառավարության ինստիտուտների կողմից դրանց հետագա կատարելագործման համար», սակայն զեկույցն, այնուամենայնիվ, կոչ չի անում ԿԸՀ-ին հրապարակելու ընտրողների ցուցակները:

Ինչ վերաբերում է վարչական ռեսուրսի չարաշահմանը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն տվել է հետևյալ մասնավոր օրինակները. (i) կրթության ոլորտի աշխատողների կողմից նախընտրական քարոզչության իրականացում, այդ թվում՝ դեպքեր, երբ ՀՀԿ-ն ակտիվորեն ներգրավել է ուսուցիչներին և աշակերտներին նախընտրական քարոզչության իրականացման մեջ, և (ii) «բարեգործություն» ԲՀԿ-ի կողմից՝ որպես իր նախընտրական քարոզչության մաս:

Ինչ վերաբերում է բողոքարկման մեխանիզմներին, զեկույցը կենտրոնանում է ընտրությունների վերաբերյալ բողոքներ ներկայացնելու սահմանափակումների վրա և նշում հետևյալը.

> «Ընտրական հանձնաժողովները և դատարանները հիմնականում որդեգրել էին առավել ձևական մոտեցում բողոքները լուծելիս՝ հաճախ մերժելով բողոքները ձևական հիմքերով կամ առանց քննելու դրանց էությունը կամ կից ապացույցները: Որոշ դեպքերում կայացվել են իրավականորեն չհիմնավորված որոշումներ: Գլխավոր դատախազությունը եւ Ոստիկանությունը թափանցիկ էին հաղորդված խախտումներըուսումնասիրելու իրենց գործողություններում, բայց

ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի (ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) և Եվրոպական պառլամենտի պատվիրակությունների հետ համատեղ: Ընդհանուր առմամբ մասնակցել են 349 կարճաժամկետ դիտորդներ ԵԱՀԿ-ի 42 պետություններից և մեկ ԵԱՀԿ-ի գործընկեր պետությունից: Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի (IAMNCIS) ներկայացուցիչները նեբկա են գտնվել 66 ընտրական տեղամասերում Հայաստանի 10 մարզերից 6-ում:

> ընտրություններին առնչվող դեպքերով քիչ թվով քրեական հետաքննություն են իրականացրել և հաճախ կեղծ հիմքերով մերժել են քրեական գործի հարուցումը»:

2012թ.-ի մայիսի 7-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, ԵԱՀԿ ԽՎ-ն, ԵԽԽՎ-ն և Եվրախորհրդարանը տարածեցին համատեղ հայտարարություն, որում նախընտրական քարոզչությունը բնորոշվում էր որպես «աշխույժ, մրցակցային և հիմնականում խաղաղ»: Այդուհանդերձ, հայտարարության մեջ նաև ասվում էր, որ «մտահոգությունների թվին էին պատկանում նախընտրական քարոզարշավը կարգավորող դրույթների խախտումների պատճառով անհավասար խաղադաշտը և ընտրողների վրա ճնշում գործադրելու դեպքերը, ինչպես նաև բողոքարկման և վերադաս ատյաններ վերաքննիչ բողոքարների ներկայացման գործընթացի հետ կապված բացթողումները»:

Հայտարարության մեջ մատնանշվում էին հետևյալ խախտումները.

- Բողոքարկման արդյունավետ մեխանիզմի բացակայություն,
- Ընտրական օրենսգրքի խախտումներ,
- Ընտրացուցակների հետ կապված բացթողումներ,
- Ճնշում վարչական համակարգի աշխատողների վրա,
- Մի շարք ընտրատեղամասերում ընտրողների ահաբեկում,
- Չաշխատող թանաք, որը նախատեսված էր որպես բազմակի քվեարկությունների կանխարգելման միջով,
- Դիտորդների հարաբերականորեն մեծ թվով բացասական գնահատականներ:

Ընդհանուր առմամբ, հայտարարության մեջ ասվում էր.

> «Դիտարկվել են կազմակերպչական խնդիրներ, գործընթացին անտեղի միջամտության և լուրջ ընտրախախտումների դեպքեր զգալի թվով ընտրական տեղամասերում, ինչի արդյունքում 120 (9.4 տոկոս) դիտարկումներում քվեարկությունն արժանացել է բացասական գնահատականի, ինչը զգալի թիվ է»:

2012թ.-ի մարտի 14-ին տարածած հաղորդագրության մեջ ԵԽԽՎ-ի նախընտրական պատվիրակությունը գովասանքով էր արտահայտվել ընտրական միջավայրի մասին, սակայն միևնույն ժամանակ մտահոգություն էր արտահայտել բազմակի քվեարկության հավանականության մասին՝ արտասահմանում ապրող ընտրողներին ընտրացուցակներում ներառելու միջոցով:

2012թ.-ի մայիսի 8-ին հրապարակված նախնական արդյունքների վերաբերյալ Եվրամիության Գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի և

Հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի հայտարարությունը բնորոշեց ընտրությունների արդյունքները որպես մեկ քայլ առաջ «դեպի առավել թափանցիկ և առաջադիմական ընտրություններ»:

Արևելյան գործընկերության քաղաքացիական ֆորումի ղեկավար կոմիտեի ներկայացուցիչ Կրժիստոֆ Բոբինսկին, ԳալաTV-ին տված հարցազրույցի ժամանակ նշել էր, որ ընտրությունների հիմնական խնդիրը լայնատարած կոռուպցիան է, վարչական ճնշումները և բազմակի քվեարկությունները:

Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովը գովաբանել էր ընտրությունների կազմակերպումը և իր կազմակերպած մամուլի ասուլիսի ընթացքում (7-ը մայիսի 2012թ.) բնորոշել ընտրությունները «բաց, ազատ և մրցակցային» և առանց համակարգային խախտումների[21]:

2012թ.-ի մայիսի 18-ին տված հարցազրույցի ընթացքում Հայաստանում ԱՄՆ դեսպան Զոն Հեֆերնը դրվատանքով էր արտահայտվել լրատվամիջոցներին չխոչընդոտելու հետ կապված առաջընթացի, ինչպես նաև ընտրատեղամասերում տիրող կարգուկանոնի և թափանցիկության մասին: Այդուհանդերձ, նա նույնպես հիշատակել էր ընտրակաշառքը և վարչական ռեսուրսի չարաշահումը որպես մնայուն խնդիրներ: Դրան հետևած իր տեսաուղերձում, նա բարձրացրել էր ընտրությունների որակի հարցը և ընդգծել ընտրություններից առաջ և հետո բոլոր կուսակցությունների համար արդար միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը:

Մինչ գրեթե բոլոր արևմտյան դիտորդները մտահոգություն են արտահայտեցին ընտրողների ցուցակների մասին, որոնք հայաստանյան համատեքստում հավանական ընտրակեղծիքների ամենամեծ աղբյուրն են, ինչպես ներկայացվում է ստորև, նրանք բոլորն էլ ձեռնպահ մնացին իշխանություններին ընտրողների ցուցակները հրապարակելու կոչեր անելու հարցում: Եվ որ ավելի կարևոր է, ի հեճուկս ծանրակշիռ ապացույցների՝ միջազգային և ոչ մի դիտորդ չխոսեց իշխանության կողմից ընտրակեղծիք կատարելու մտադրության մասին՝ փոխարենը նախընտրելով գնահատել նման վարքագիծը որպես թերի գործելակարգ՝ առանց ընտրակեղծիք կատարելու մտադրության:

Տեղեկատվական ակնարկ 1. Արտասահմանյան դիտորդների ազդեցությունը Հայաստանում նախագահական ընտրությունների արդյունքների վրա

[21] Հետաքրքիր է, որ նմանատիպ գնահատական էր տվել նաև Բելառուսում, Ղազախստանում և Տաջիկստանում անցկացված վերջին ընտրություններին, որոնք ավտորիտար պետություններ են և մշտապես աչքի են ընկել խրոնիկ ընտրախախտումներով:

Տարածված կարծիք է, որ միջազգային դիտորդներն ազդեցություն են ունենում ընտրությունների արդյունքների վրա՝ կրճատելով բացահայտելի ընտրակեղծիքները: Հայդի (Hyde, 2007թ.) անցկացրած շրջադարձային ուսումնասիրության մեջ նշվում է. «նրանք ճնշում են գործադրում կառավարությունների վրա՝ անցկացնելու ժողովրդավարական ընտրություններ և ուղղակիորեն ներգրավվում են ընտրական գործընթացում տեխնիկական աջակցություն և ֆինանսավորում տրամադրելու կամ ընտրությունները դիտարկող դիտորդների թիմեր ուղարկելու միջոցով»: Ուսումնասիրությունը նաև վկայակոչում է բազմաթիվ հետազոտություններ, որոնք ցույց են տալիս որ միջազգային ճնշումն աստիճանաբար էլ ավելի է կարևորվում ներպետական քաղաքական տրանսֆորմացիաների համատեքստում:

Այս տեղեկատվական ակնարկում փորձ է արվում քանակական վերլուծության ենթարկել արտասահմանցի դիտորդների ազդեցությունն ընտրությունների արդյունքների վրա (ընտրակեղծարարության վրա՝ նրանց ունեցած ազդեցության միջոցով) 2003 և 2008թթ.-ի հայաստանյան նախագահական ընտրությունների ընթացքում: III հավելվածում ներկայացված են այդ նպատակով անցկացված տնտեսաչափական վերլուծության մանրամասները: Այստեղ ամփոփ ներկայացնում ենք այդ վերլուծությունը: Ըստ էության, վերլուծությունը համեմատում է իշխանական թեկնածուների օգտին տված ձայների հարաբերակցությունն այն ընտրատեղամասերում, որտեղ եղել են միջազգային դիտորդներ և որտեղ չեն եղել՝ երկու դեպքում էլ, Երևանում և Երևանից դուրս: Խմբերի միջինների տարբերությունը «դիտորդների ազդեցությունն է»:

III հավելվածում ներառված տնտեսաչափական ռեգրեսիայի արդյունքները հեշտորեն մեկնաբանելի դարձնելու նպատակով, արդյունքը փոխակերպել ենք հետևյալ դյուրընթեռնելի աղյուսակներին.

Աղյուսակ B1. 2003թ.-ի ընտրությունների արդյունքը. Քոչարյանի մասնաբաժինը (ընտրատեղամասերի միջինը)

	Երևանում	Երևանից դուրս	Ընդամենը
Դիտարկած	0.38	0.54	0.48
Չդիտարկած	0.40	0.56	0.54

Աղյուսակ B2. 2008թ.-ի ընտրությունների արդյունքը. Սարգսյանի մասնաբաժինը (ընտրատեղամասերի միջինը)

	Երևանում	Երևանից դուրս	Ընդամենը
Դիտարկած	0.415/0.40	0.555/0.50	0.52
Չդիտարկած	0.46/0.50	0.59/0.60	0.58

Ծանոթագրություն. Գործակիցները՝ OLS/IVREG զույգերում
A1 աղյուսակում (տես III հավելվածը) ներառված հավասարումների հիման վրա:
«Ընդամենը» սյունակը հիմնված է OLS-ի վրա:

Աղյուսակ B1-ի «Ընդամենը» արդյունքը (վերջին սյունակ), ըստ էության, կրկնում է Հայդի

(Hyde, 2007) արդյունքներից մեկը՝ ցույց տալով, որ դիտորդները միջին հաշվով նվազեցրել են Քոչարյանի ձայների մասնաբաժինը ընտրությունների առաջին փուլում 6 տոկոսով: Երևանի գործոնը (այն է՝ Երևանից ներս և դուրս գտնվող ընտրատեղամասերի միջինների տարբերությունը) հաշվի առնելուց հետո հետո «դիտորդների ազդեցությունը» յուրաքանչյուր խմբում նվազում է հասնելով 2 տոկոսի:

Հետաքրքրական է, որ 2008թ.-ի ընդհանուր «դիտորդների ազդեցությունը» մնում է գրեթե նույնը (Աղյուսակ B2-ի վերջին սյունակը): Սերժ Սարգսյանի կողմից ստացված ձայների հարաբերակցությունը միջինում 6 տոկոսով ցածր էր այն ընտրական տեղամասերում, որտեղ այցելել էին միջազգային դիտորդներ՝ համեմատած այն տեղամասերի հետ, որտեղ միջազգային դիտորդներ չէին այցելել: Այդուհանդերձ, Երևանում և Երևանից դուրս գտնվող ընտրատեղամասերի միջինները համեմատելուց հետո՝ «դիտորդների ազդեցությունը» դառնում է 4.5 տոկոս՝ համեմատած 2003թ. 2 տոկոսի հետ:

Ի լրումն խմբերի միջինների՝ վերլուծությունը ընդարձակվել է՝ ներառելով նաև 2008թ ընտրությունների ընթացքում դիտարկման համար ընտրված ընտրական տեղամասերի հնարավոր էնդոգենությունը: Այդ պատճառով կիրառել ենք III հավելվածում նկարագրված instrumental variable ռեգրեսային մոթոդոլոգիան: Արդյունքը ամրապնդում է 10 տոկոսանոց չափելի և վիճակագրական առումով զգալի «դիտորդների ազդեցության» նախնական արդյունքները 2008թ.-ի նախագահական ընտրությունների ժամանակ, հաշվի առնելով Երևանի գործոնը: Դիտորդների՝ ընտրակեղծարարությունը նվազեցնող առավել մեծ ազդեցությունը 2008թ.-ի նախագահական ընտրությունների ժամանակ՝ համեմատած 2003թ.-ի նախագահական ընտրությունների հետ, հետաքրքիր է և կարող է բացատրվել ի թիվս այլոց ընտրակեղծիքների առավել բարձր մակարդակով և/կամ 2008թ.-ի դիտորդների ավելի լավ պատրաստվածությամբ:

Վերոհիշյալ վերլուծության ամենակարևոր բացահայտումն այն է, որ եթե լինեին միջոցները Հայաստանի բոլոր ընտրական տեղամասեր դիտորդներ ուղարկելու համար (այլ ոչ՝ միայն դրանց 52 տոկոսում), այլ հավասար պայմանների պարագայում 2008թ.-ի ընտրությունների արդյունքները կարող էին չափազանց անկանխատեսելի լինել: Կախված «դիտորդների ազդեցության» իրական չափից, ինչը, մեր կարծիքով, տատանվում է 4.5-10 տոկոսի միջև՝ իշխանական թեկնածուի ձայների կրճատումը՝ ընտրությունների վերջնարդյունքը կարող է լինել 48–ից 50.6 տոկոս (=52.8%-(1-0.52)*(4.5% կամ 10%)): 50 տոկոսից պակաս հարաբերակցությունը, անշուշտ, կթելադրեր երկրորդ փուլ:

Քաղաքացիական հասարակության արձագանքները

Տասնմեկ տեղական ՀԿ-ների մի խումբ, որը մասնագիտացած է մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերով, 2012թ.-ի մայիսի 12-ին տարածեց խիստ ձևակերպումներ պարունակող մի հայտարարություն, որում,

մասնավորապես, ասվում էր. [22]

> «Որպես մարդու իրավունքների և ժողովրդավարության խթանմամբ զբաղվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ՝ մենք խորապես մտահոգ ենք ընտրակեղծարարության մեխանիզմների շարունակական բարդացման և «կատարելագործման» գործելակարգով, ինչպես նաև ընտրակեղծարարությամբ զբաղվողների անպատժելիությամբ: Մենք գտնում ենք, որ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպությունները պետք է համապատասխան եզրակացություններ անեն Հայաստանի՝ ժողովրդավարական բարեփոխումներ անցկացնելու միջազգային պարտավորությունների ևս մեկ ձախողումից»:

Հայտարարության մեջ ընդգծվում էր, որ համատարած ընտրակաշառքները, վարչական ռեսուրսի չարաշահումը, ինչպես նաև աշխատողների նկատմամբ քաղաքական ճնշումների և հետապնդումների իրականացումը պետական և մասնավոր հատվածների գործատուների կողմից, ինչպես նաև բազմաթիվ այլ ապօրինի «տեխնոլոգիաների» օգտագործումը լայնամասշտաբ ազդեցություն են ունեցել քվեարկության գործընթացի և ընտրությունների արդյունքների վրա: Կառավարությանը կոչ էր արվում նաև հրապարակել այն ընտրողների ցուցակը, որոնք մասնակցել էին ընտրություններին՝ վերականգնելու հանրության վստահությունը և ընտրությունների իրական արդյունքները[23]:

Մեկ այլ ՀԿ՝ «Ընտրությունը քոնն է», որը համարվում է իշխանության հետ կապված ՀԿ, 2012թ.-ի մայիսի 8-ին տարածած հայտարարության մեջ քվեարկության գործընթացները և նախընտրական քարոզչությունը գնահատել էր «կատարելությունից հեռու /…/, սակայն դինամիկ գործընթաց, որն արձանագրեց որոշակի առաջընթաց»: Այդուհանդերձ, «Ընտրությունը քոնն է»-ն արձանագրել էր հետևյալ խախտումները՝ անհետացող թանաք, ապօրինի «բարեգործություն,» և ճնշումներ ընտրողների կամքի վրա:

Ընտրատեղամասերում գտնվում էին մեծ թվով տեղացի դիտորդներ, որոնց դիտորդ լինելու հանգամանքը կասկածի տակ էր դրվում շատ դիտորդների կողմից: Սփյուռքահայ մի լրագրող, որը դիտարկում էր ընտրությունները ԱՄՆ-ում գտնվող հայկական մի շաբաթաթերթի կողմից, նշել է.

---

[22] Խմբի կազմում էին Հայաստանի հելսինկյան կոմիտե, Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների, Թրենսփերնսի ինթրնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Լրագրողների “Ասպարեզ” ակումբ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Բաց հասարակություններ հիմնադրամ, Մենք պլյուս, Կրթության ասպարեզ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն, Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ-ները: Այդուհանդերձ, այդ ՀԿ-ներից ոչ բոլորն են գրանցված եղել որպես տեղական դիտորդներ:

[23] “Ընտրությունների դիտորդները հայտարարություն են տարածել մայիսի 6-ի քվեարկության վերաբերյալ”, Ազբարեզ, 12-ը մայիսի, 2012թ.:

> «Տարակուսելին այն փաստն է, որ կային դիտորդներ և նույնիսկ լրագրողներ, որոնք անտեղակ էին, թե ինչ կազմակերպություն էին ներկայացնում կամ ստիպված էին ստուգել իրենց վրա փակցված վկայականները, որպեսզի պարզեն, թե իրենք ովքեր են»:

Այս զգացումը կիսում էին նաև որոշ հայտնի ակտիվիստներ 2012թ.-ի մայիսի 11-ին հեռարձակված Ա1+ անկախ հեռուստաալիքի կողմից կազմակերպված քննարկման ժամանակ:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից ընտրությունների անուղղակի/ ոչ պաշտոնական դիտարկումը սոցիալական լրատվամիջոցներով, ինչպիսիք են Ֆեսբուքը, Թվիթերը և Յություբը, նախորդ ընտրությունների համեմատ ավելի մեծ տարածում է ստացել, գործոն, որը միայն մասամբ կարելի է բացատրել երկրի տարածքում համացանցից օգվողների թվի աճով:

IV. ԸՆՏՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Ընդհանուր նկատառումներ

Քաղաքագիտության ոլորտի ժամանակակից գրականությունը մեծ առաջընթաց է արձանագրել ընտրակեղծարարության ընկալման գործում: Բազմաթիվ են այն ուսումնասիրությունները, որոնք անդրադառնում են ընտրակեղծարարության տարբեր ոլորտների՝ սկսած սահմանումներից վերջացրած նպաստող երևույթներով և մեթոդներով: Ընտրակեղծարարության վերաբերյալ վերջերս գրված իր հետազոտության մեջ Սյոբերգը (Sjoberg, 2012b) փաստարկում է, որ բռնակալները մեծ հաջողությամբ են հարմարվում օրենքների փոփոխություններին և դիտորդական ճնշումներին՝ որդեգրելով ընտրակեղծիքների նոր մեթոդներ, որոնք փոխարինում են ընտրակեղծիքների առավել բացահայտ ձևերին այնպես, որ էականորեն չեն ազդում ‘ցանկալի’ արդյունքի վրա (և, որպես այդպիսին, *չեզոք են արդյունքների հանդեպ*): Նա այսպես է նկարագրում բռնակալների համար խթան հանդիսացող համակարգը և նրանց մտահորիզոնը.

> «Ոչ մրցակցային բռնապետությունում ընտրական ինստիտուտների իդեալական վիճակը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին: Առաջին՝ ժողովրդավարության արտոնագրի ազդարարում ի լուր ներքին և միջազգային հանրության՝ պատրանք ստեղծելով, որ ընտրակեղծիքները նվազում են: Երկրորդ՝ թույլ տալ, որ ընտրակեղծիքների պակաս բացահայտելի ձևերը հարատևեն (կամ նույնիսկ աճեն)՝ապահովելու գերմեծամասնություններ, ինչը կկանխարգելի այլ մրցակիցների ի հայտ գալուն»:

Այսպիսով, Սյոբերգը փաստարկում է, որ ընտրակեղծիքների ձևերը կարող են փոխվել այնպես, որ նվազագույն ազդեցություն ունենան վերջնական արդյունքի վրա: Վերջնական արդյունքների հանդեպ այսպիսով չեզոք հանդիսավող այս ընտրակեղծարարության հարմարեցումը՝ ի պատասխան դիտորդական ճնշումների կարող է ընդունել ընտրական տեղամասերից դուրս կեղծիքների ձևեր, այդ թվում՝ ահաբեկում կամ ընտրակաշառք: Այս տեսությունը բացատրում է թե ինչու, օրինակ, հայաստանյան իրականությունում, ինչպես վկայում են դիտորդների զեկույցները, ընտրախախտումների և ընտրակեղծիքների որոշ տեսակներ նվազել են (օրինակ՝ քվեատուփերի լցոնումը), մինչ՝ այլ տեսակները աճել են (օրինակ՝ ընտրակաշառքը կամ բազմակի քվեարկությունը): Դժբախտաբար, ընտրակեղծիքի որոշ տեսակներ շատ դժվար է բացահայտել էմպիրիկ միջոցներով, և հետազոտությունները պետք է հիմնվեն ականատեսների վկայությունների վրա: Ստորև ներկայացնում ենք այս ամենի որոշ ապացույցներ:

Բ. Ընտրողների ցուցակները՝ որպես ընտրակեղծիքի հնարավոր աղբյուր

Հայաստանյան համատեքստում ընտրակեղծիքի լրջագույն ձևերն արմատավորված են ուռճացված ընտրացուցակներում: Խնդիրը ծագել է նրանից, որ ընտրացուցակներում ներառված են այն քաղաքացիների անունները, որոնք բնակվում են արտասահմանում և չեն կարող քվեարկել, որովհետև հրաժարվել են ՀՀ քաղաքացիությունից կամ չեն կարող ճամփորդել Հայաստան՝ քվեարկելու[24]: Հետաքրքիր է, որ վերջին տարիներին հետևողականորեն աճում է ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը, չնայած ազգաբնակչության թիվը գնալով նվազում է: Ընտրողների թվի ամենամեծ աճն արձանագրվել է 2008 և 2012թթ.-ի համապետական ընտրությունների միջակայքում (համարյա 195 հազար կամ ընդհանուրի 8.3 տոկոսը), ինչը որոշ հարցեր է առաջացնում: Հասկանալու համար, թե ինչպես են կազմվում ընտրողների ցուցակները Հայաստանում մենք առաջ ենք քաշել երկու վարկած, որոնք ներկայացնում ենք ստորև՝ համապատասխան հաշվարկների հետ մեկտեղ:

<u>Վարկած # 1.</u> Հայաստանի ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը հաշվարկվում է առանց ներառելու արտագաղթը:

Սա ցույց տալու համար մենք հաշվարկել ենք ընտրողների ցուցակի զուտ ավելացումը 2008 և 2012թթ.-ի միջակայքում՝ օգտվելով ծնունդների և մահերի

[24] Քանի դեռ հատուկ ծանուցում չի ներկայացվել ոստիկանությանը արտագաղթելուց առաջ, որով ընտրողը խնդրում է հանել իրեն ընտրողերի ցուցակից, ընտրական օրենսգրքի պահանջն է, որ քաղաքացին մնա ընտրողների ցուցակում՝ նրա վերջին հայտնի հասցեի մատնանշմամբ:

պաշտոնական վիճակագրությունից: Եթե այս կերպ հաշվարկված թիվը մոտ կամ ցածր լինի ԿԸՀ-ի կողմից հաշվարկված թվից, ապա կարելի է ենթադրել, որ արտագաղթը հաշվի չի առնվել:

Ստորև ներկայացված Աղյուսակ 3-ը ցույց է տալիս ազգաբնակչության (պաշտոնական) վիճակագրությունը 2008 – 2012թթ.-ի ընթացքում: Զուտ ավելացումը հաշվարկելու համար մենք առաջին հերթին հաշվարկում ենք ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների խմբի ներհոսքերը այդ տարիների համար առանձին (“Նոր զուտ ընտրելու իրավունք ունեցողներ” տող Աղյուսակ 3-ում), այնուհետև գումարում դրանք՝ հաշվարկելու աճը 2008-2012թթ.-ի ընթացքում: Սա հանգեցնում է 199.7 հազարով ավելի ընտրելու իրավունք ունեցող անձանց 2008թ.-ի փետրվարից 2012թ.-ի մայիսն ընկած ժամանակահատվածում: Մինչ փոքր-ինչ ավելի, այս թիվը բավական մոտ է երկու ընտրությունների միջակայքում ընտրելու իրավունք ունեցող անձանց թվի աճի պաշտոնական ցուցանիշին՝ 194.6 հազար[25]: Հետևաբար, մենք եզրակացնում ենք, որ ԿԸՀ-ի՝ ընտրելու իրավունք ունեցող անձանց ցուցակը՝ հնարավոր սխալի հաշվառմամբ, հիմնված է ազգաբանկչության ծնունդների և մահերի վիճակագրության վրա և հաշվի չի առնում մշտական արտագաղթը:

Աղյուսակ 3. Նոր զուտ ընտրելու իրավունք ունեցողների թվի աճը 2008 և 2012թթ. ընտրությունների միջակայքում (‘000-ով)

	2012	2011	2010	2009	2008
Տվյալ տարում 18-ը լրացած (A) 1/	20.9	70.9	77.8	79.9	62.1
Նախորդ տարում մահացած 2/	38.8	27.9	27.5	27.4	0 (26.8)
Որոնցից					
Մահացել է “18 և բարձր” տարիքային խմբում (B) 2/ 3/	35.7	25.7	25.3	25.2	0 (24.7)
Զուտ նոր ընտրելու իրավունք ունեցող անձինք (C=A-B)	-14.8	45.2	52.5	54.7	62.1
Ծանոթագրություն.					
Ընտրելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թիվը	2,522.9	...	...	...	2,328.3

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն և PFA-ի հաշվարկներ:
1/ 1990-ից 1994 թթ. ընկած ժամանակահատվածում ծնված անձինք: 2012 և 2008թթ. առժեքները համապատասխանեցվել են՝ հաշվի առնելու այն փաստը, որ ընտրություններն անց են կացվել մայիսին և փետրվարին՝ համապատասխանաբար:

[25] Սա Աղյուսակ 3-ի վերջին շարքի երկու թվերի միջև տարբերությունն է:

2/ Հաշվարկում օգտագործված 2008թ.-ի առժեքը զրո է, հաշվի առնելու համար այն, որ 2007թ.-ին մահացած անձինք պետք է արդեն իսկ հաշվի առնված լինեն 2008թ.-ի ընտրելու իրավունք ունեցող անձանց ցուցակում: Նմանապես, 2012թ.-ի առժեքը նույնպես ճշգրտվել է՝ ներառելով այն անձանց, ովքեր մահացել են 2012թ.-ի հունվարի 1-ից մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածում:
3/ Բոլոր մահերի մոտ 8 տոկոսը տեղի է ունեցել 0-17 տարիքային խմբում: Հետևաբար, մահերի ընդհանուր թվի միայի 92 տոկոսն է օգտագործված այս հաշվարկում:

Այսպիսով փակ համակարգում առանց արտագաղթի, ընտրելու իրավունք ունեցող անձանց թիվը կարող է աճել՝ ի հեճուկս ազգաբնակչության նվազող թվի[26]: Այդուհանդերձ, կարևոր է հաշվի առնել, որ իրերի այսպիսի համադրում շատ հազվադեպ է պատահում և նորմալ պայմաններում պետք է որ տեղի չունենա, հատկապես առաջիկա տարիներին՝ հաշվի առնելով 1990-ական թթ.-ի կեսերի ծնունդների կտրուկ նվազումը: Այդուհանդերձ, Հայաստանը մեծապես տուժել է արտագաղթի մեծ և հետևողական հոսքից, և եթե ազգաբնակչության վիճակագրությունը (այդ թվում՝ ընտրելու իրավունք ունեցող անձանց) չհամապատասխանեցվի արտագաղթին, բնական հարց է առաջանում, թե ինչպես կփոխվի իրավիճակը, եթե հաշվարկում պատշաճ կերպով հաշվի առնվի արտագաղթը:

<u>Վարկած # 2. Եթե ենթադրվում է արտագաղթի ողջամիտ մակարդակ, վերջին համապետական ընտրությունների մասնակցությունը պետք է որ անհավանական մեծ լինի:</u>

Սա ապացուցելու համար, անենք մի պարզ վարժություն: Ճշգրտում ենք ազգաբնակչության պաշտոնական ընդհանուր թիվը՝ ենթադրելով, որ 1991թ.-ից ի վեր Հայաստանը տարեկան լքել է մոտ 25,000 մարդ (կամ 20,000 ընտրելու իրավունք ունեցող անձ), գիտակցելով որ արտագաղթի նման ծավալները՝ որոնք համահունչ են տարբեր առիթներով <u>ազգային միգրացիոն ծառայությունների հաղորդած</u> տվյալներին, ակնհայտորեն նվազեցված են: Գծապատկեր 2-ի վերևի հարթությունը ցույց է տալիս, թե ինչպես է այս ենթադրյալ արտագաղթի գիծը /կարմիր/ տարբերվում Հայաստանի ազգաբնակչության երեք համապատասխան մարդահամարների հաղորդած տվյալներից /կապույտ գիծ/:

Ստացվում է, որ ճշգրտված գիծը համարյա նույնությամբ կրկնում է 1989 և 2001թթ.-ի մարդահամարների ազգաբնակչության դինամիկան, սակայն ենթադրում է բնակչության ավելի մեծ կորուստ 2001 և 2011թթ.-ի միջակայքում,

---

[26] Ինչպես ցույց է տրված վերևում, սա կարող էր պատահել, եթե 18 տարի առաջ ծնված անձանց թիվն ավելի մեծ լինի, քան ընթացիկ տարում մահացածներինը:

քան ցույց է տալիս 2011թ.-ի մարդահամարը: Այդուհանդերձ, ի թիվս մի շարք այլ վերլուծաբանների, մենք ևս առանձնապես արժանահավատ չենք դիտարկում 2011թ.-ի մարդահամարի տվյալները[27]:

Գծապատկեր 2-ի ստորին երկու հարությունները ցույց են տալիս համապատասխան տվյալները՝ ընտրելու իրավունք ունեցող անձանց թիվը և ընտրություններին մասնակցած անձանց թիվը Հայաստանում անցկացված բոլոր նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ համապատասխանաբար /կապույտ և կարմիր գծեր/: Ի լրումն սրա՝ մենք նաև գծագրել ենք ընտրելու իրավունք ունեցող անձանց ճշգրտված թվերը /սև գծեր/, որոնք համահունչ են արտագաղթի ծավալների մասին մեր ենթադրություններին (այն է՝ 1991թ.-ից ի վեր միջինում տարեկան արտագաղթել են ընտրելու տարիքի 20,000 անձինք):

Գլուխկոտրուկի բացակայող մասը *ենթադրյալ* մասնակիցների թվի հաշվարկն է: Պետք է հաշվի առնել, որ եթե ընտրելու իրավունք ունեցող անձանց պաշտոնական ցուցակի փոխարեն օգտագործվում է ընտրելու իրավունք ունեցող անձանց ճշգրտված թիվը /սև գիծ/, ընտրությունների մասնակցությունը կկազմի 94 տոկոս 2008թ. նախագահական և 92 տոկոս 2012թ. խորհրդարանական ընտրությունների համար[28]: Ակնհայտ է, որ մասնակցության այս երկու ցուցանիշն էլ իրատեսական չեն, ինչով և ապացուցվում է Վարկած # 2-ը:

Սրա արդյունքում ընտրողների մասնակիցների պաշտոնական թիվը (1,559 հազար, ինչպես հաղորդում է ԿԸՀ-ն) անիրատեսականորեն բարձր է: Դժվար չէ տեսնել, թե ինչու է դա այդպես: 70 տոկոսանոց ողջամիտ մասնակցություն ենթադրելը (ինչը կարելի է պնդել, որ մնում է բարձր) մեր ընտրելու իրավունք ունեցող անձանց ճշգրտված քանակի պարագայում (1,697 հազար), մենք հանգում ենք 1.188 միլիոն (=1,697*0.7) քվեարկողի:

---

[27] Բնակչության հաշվարկման գործընթացի ճշգրտության մասին կասկածներ վերջին տարիներին արտահայտել են բազմաթիվ վերլուծաբաններ: Հայաստանի նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը հարցականի տակ է դրել ազգաբնակչության պաշտոնական թիվը աշխատուժի վիճակագրության հիման վրա: Ազգագրագետ և ազգային փոքրամասնությունների և կրոնական հարցերի վարչության նախկին պետ Հրանուշ Խառատյանը նույնաբովանդակ կասկածներ է արտահայտել մարդահամարի արդյունքի վերաբերյալ:

[28] Զարմանալի չէ, որ մասնակցության թիվը մեր մոդելում կանցնի 100 տոկոսը շատ արագ, եթե շարունակենք մեծացնել Հայաստանի տարեկան միջին արտագաղթի մասին ենթադրությունը (այն է՝ ենթադրենք 25,000-ից ավելի մարդ տարեկան):

Գծապատկեր 2. Բնակչության թիվը, ընտրելու իրավունք ունեցող անձինք և ընտրական մասնակցությունը







Population count=Բնակչության թիվը
Պաշտոնական (մարդահամարի) թիվը,
Augmented population count=Ճշգրտված բնակչության թիվը

Նապազահական ընտրություններ 1991-2008
Ընտրական իրավունք ունեցողների պաշտոնական թիվը
Ընտրական մասնակցության պաշտոնական Ճշգրտված թիվը
Ընտրական իրավունք ունեցողների թիվը

Խորհրդարանական ընտրություններ 1990-2012
Ընտրական իրավունք ունեցողների պաշտոնական թիվը
Ընտրական մասնակցության պաշտոնական թիվը
Ընտրական իրավունք ունեցողների Ճշգրտված թիվը

Սա նշանակում է 371 հազարով ավելի ընտրող (=1,559-1,188 հազար)՝ պաշտոնական թվերի համեմատ կամ 31 տոկոս, որն այն թիվն է, որը ամենայն հավանականությամբ արհեստականորեն ավելացվում է մասնակիցների վերջնական թվին: Հաշվի առնելով մեր խիստ պահպանողական ենթադրություններն արտագաղթի և մասնակցության վերաբերյալ, այս թիվը պետք է համարել ԿԸՀ-ի կողմից պաշտոնական հաշվարկին ավելացված ընտրողների թվի նվազագույն սահմանը: Դժբախտաբար այս պատկերը ակնհայտորեն երևում է Հայաստանի ծայր հյուսիսային կամ ծայր հարավային գյուղական բնակավայրերը այցելելիս: Զավեշտալի է, որ այս բնակավայրերից մի քանիսում վերջին համապետական ընտրությունների ժամանակ արձանագրվել է մասնակցություն անիրական բարձր ցուցանիշները:

Մինչ այս արդյունքները կարող են զարմանալի չլինել, Վարկած #1 և #2 արդյունքները բացահայտում եմ ընտրական չարաշահումների մեխանիզմները Հայաստանում[29]: Մինչ ընտրողների ցուցակներում լիարժեքորեն արտագաղթն արտացոլելը կարող է որ իրոք մեթոդոլոգիական և տեխնիկական առումով դժվար լինի, սակայն հայտարարելը, որ մեծ թվով մարդիկ են ընտրել, քան իրականությունն է, ըստ էության, ընտրակեղծիք է, որը քրեորեն պատժելի արարք է մի շարք պետություններում, այդ թվում՝ Հայաստանում:

[29] Համապատասխան պաշտոնատար անձինք ժամանակ առ ժամանակ ընդունել են արտագաղթը պատշաճ կերպով հաշվի առնելու հետ կապված դժվարությունները:

Գ. Ընտրակեղծիքներ ընտրությունների մասնակցությունը ուռճացնելու միջոցով

Ընտրությունների մասնակիցների արհեստականորեն մեծացրած թվերի մասին լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու նպատակով մենք 2012թ. ընտրությունների արդյունքների նկատմամբ կկիրառենք նախկինում արդեն իսկ օգտագործած մի մեթոդոլոգիա (տես 2008 և 2009թթ. ընտրությունների վերաբերյալ PFA-ի զեկույցները)[30]: Այս մեթոդոլոգիայի հիմքում ընկած առանցքային նախադրյալն այն է, որ սպասվում է, որ ընտրությունների մասնակիցների (ինչպես նաև յուրաքանչյուր թեկնածուի օգտին տրված ձայների թիվը) կունենա նորմալ (Գաուսյան) բաշխում[31]: Ընտրությունների անցկացման մասին վերջերս լույս տեսած ուսումնասիրությունները օգտագործում են ընտրական մասնակցությունը որպես ընտրակեղծիքի ցուցանիշ այն երկրներում, որտեղ առկա են ընտրությունների խրոնիկ խախտումներ[32]: Ինչպես փաստարկում են *Կլիմեքը և այլք* (2012), մասնակիցների ուռճացված թիվը կարող է վկայել քվեատուփի լցոնման, բազմակի քվեարկության և ձայների՝ ընտրակեղծիքներով ուղեկցվող հաշվարկի մասին: Ի դեպ, այս բոլոր գործողությունների մասին էլ եղել են բազմաթիվ հաղորդումներ Հայաստանի 2012թ-ի. մայիսի 6-ի ընտրությունների ժամանակ:

Ստորև ներկայացված գծապատկեր 3-ը ներկայացնում է ընտրատեղամասերի բաշխումը որպես մասնակցություն ֆունկցիա 2007 և 2012թթ.-ի խորհրդարանական ընտրությունների ընթացքում: 2012թ.-ի կորը ցույց է տալիս, որ 2007թ.-ի համեմատությամբ առկա է դրական զարգացում (քանի որ դրա ձևը ավելի մոտ է նորմալ կորի), ինչը վկայում է այն մասին, որ 2007թ.-ի համեմատությամբ՝ 2012թ.-ի ընտրությունների մասնակիցների թիվը պակաս չափով է ուռճացվել: Այդուհանդերձ, դեռևս կան արժանահիշատակ շեղումներ: Աջ կողմի 'պոչը' բավական 'գեր' է, ինչը նշանակում է անհամաչափ մեծ թվով ընտրական տեղամասեր, որտեղ ընտրողների թիվը մեծ է: Եվ իրոք, 1,963 ընտրատեղամասերից 104-ում արձանագրվել են 85 տոկոսից ավելի

---

[30] Երկու զեկույցներում էլ մենք լուրջ ապացույցներ ենք գտնում ընտրությունների մասնակիցների թվի ուռճացման ընտրակեղծիքի վերաբերյալ, որից շահում է իշխանական թեկնածուն կամ կուսակցությունը, համապատասխանաբար:

[31] Այս պարագայում մասնակիցների հարաբերակցությունը նման կլինի զանգվածաձև կորի, որտեղ զանգի գագաթը ցույց է տալիս բաշխման միջինը, միջնագիծը և ձևը: Իսկ ավելի ֆորմալ, փոփոխականների որևէ մեծ խմբի բաշխման նորմալությունը բխում է Լյապունովի Կենտրոնական սահմանի թեորեմից: Վերջինը պահանջում է, որպեսզի խնդրո առարկա պատահական փոփոխականները անկախ լինեն, որպեսզի նրանց գումարը/միջինը նորմալ բաշխված լինի:

[32] Սոբիանինի և Սուխովոլսկու (1993) և Սոբիանինի, Գելմանի և Կայունովի (1994) ուսումնասիրությունները այս տիպի գրականության առաջատարներն են:

մասնակիցներ, իսկ 25-ում 95 տոկոսից ավելի[33]: Կորի այս 'ուռուցիկ մասը' նման է կեղծված համարվող մի շարք ընտրություններում կատարված դիտարկումներին[34]:

Այստեղ ուշադրության արժանի է այն, որ ի հեճուկս այն բանի, որ 2012թ.-ի ընտրություններում ուղղակիորեն ընտրակեղծիքներ պարունակող գործողությունների մասին հաղորդումներն ավելի քիչ են եղել, տվյալները ցույց են տալիս, որ իրական մասնակիցների թիվը զգալիորեն 'ուռճացվել' է տեսական կանխատեսումների համեմատ: Այս պատկերն էլ ավելի համոզիչ է դառնում, եթե 2012թ.-ի գիծը համեմատում ենք 2008թ.-ի արդյունքի հետ (տես Գծապատկեր 3-ը): Չնայած որ նախագահական և խորհրդարանական ընտրությունների միջև առկա տարբերությունը կարող է բացատրել ընտրական մասնակցության տարբերությունը երկու ընտրություններում, համեմատությունը այնուամենայնիվ հետաքրքրական է: 2008թ.-ի կորը ավելի նորմալ է երևում՝ ի հեճուկս ավելի մեծ միջին մասնակցության ցուցանիշի և փոքր վիճակագրական շեղման, քան 2012թ-ինը, որն ավելի «գիրոտ պոչ» ունի (այն է՝ ավելի մեծ թվով ընտրական տեղամասեր սպասվածից ավելի բարձր մասնակցությամբ): Սա ենթադրում է մասնակցությունը մեծացնող կեղծիքների ավելի մեծ աստիճան 2012թ.՝ համեմատած 2008թ.-ի հետ[35]:

---

[33] Անդրադառնալով դիտորդական վկայություններին՝ ԲԻԲԻՍի-ի լուրերում հրապարակված հոդվածում նշվում է, որ Երևանի մի ընտրական տեղամասում 15 տկոսով գերազանցել է գրանցված ընտրողների թվին:

[34] Օրինակները ներառում են Ռուսաստանի Ֆեդերացիայի հանրապետությունները 1996 և 2000թթ. նախագահական ընտրությունների ընթացքում և 1995, 1999, և 2003 թթ. Պետդումայի ընտրությունները, և Ուկրաինայի 2004թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլը (ի թիվս այլոց տես Մյագկով և այլք, 2005թ): Միևնույն ժամանակ, մոտավորապես նորմալ բաշխվածություն կարելի է գտնել Ռուսաստանի հանրապետություն չհանդիսացող միավորներում 1996թ. նախագահական ընտրությունների երկու փուլերում էլ, 2000թ. նախագահական ընտրությունների ժամանակ, և 1999թ և 2003թ Պետդումայի ընտրությունների ժամանակ, Ուկրաինայի 1999թ. ընտրությունների և 2004թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլում:

[35] Գծապատկեր 2-ում կորերի համեմատությունը նաև մատնանշում է, որ 2008թ. ընտրությունների մասնակիցների թիվը մեծ թվով ընտրական տեղամասերում փոքր չափով է ուռճացվել, մինչդեռ 2012թ. այն գուցե ուռճացվել է փոքր թվով ընտրական տեղամասերում մեծ չափով:

Գծապատկեր 3. Նախորդ համապետական ընտրությունների մասնակցության հաճախականությունը (2007, 2008 և 2012թթ.)



Ընտրական տեղամասերի թիվը
Ընտրական մասնակցություն, հարաբերակցությունը

Հաջորդ բնական քայլը պետք է լինի որոշել, թե ինչով է պայմանավորված այն հանգամանքը որ քվեատուփի լցոնման դեպքերի մասին հաղորդումները շատ ավելի քիչ էին 2012թ.-ին, քան 2008թ.-ին: Պատասխանը, մեր կարծիքով, կախված է 2012թ.-ի օգտագործած *կեղծիքների տեսակից*: Դիտորդների՝ վերը նշված վկայություններից մենք ենթադրում ենք, որ 2012թ.-ի *բազմակի քվեարկությունը* փոխարինել է *քվեատուփի լցոնմանը*՝ որպես ընտրությունների մասնակցությունը մեծացնող ընտրակեղծիքի հիմնական մեխանիզմ: Ընտրակեղծիքի երկու տեսակներն էլ մեծացնում են մասնակցությունը և կարող են բացահայտվել վիճակագրական մեթոդոլոգիայի օգնությամբ (ինչպիսիք վերը նշվածներն են), սակայն եթե *քվեատուփի լցոնումը* կարող է բացահայտվել դիտորդների կողմից, ապա *բազմակի քվեարկությունը*՝ ոչ:

Նախքան մասնակցությունը մեծացնող ընտրակեղծիքների ուսումնասիրելը և դրանցից առանձնապես շահողներին բացահայտելը ներկայացնում ենք վիճակագրական թեսթեր այլ տեսակի ընտրակեղծիքներ բացահայտելու համար, այս անգամ կապված ձայների հաշվարկի հետ:

Դ. Թվային թեսթեր

Սույն բաժնում մենք թեսթի ենք ենթարկում ընտրակեղծիքի մեկ այլ տեսակ, որը առնչվում է ձայների հաշվարկի հետ: Այս մեթոդաբանությունը օգտագործում է ընտրությունների վերջնական արձանագրություններում մուտք արված բոլոր թվերի վերջին նիշերի վիճակագրական բաշխվածությունը՝ չափելու վերջնական ցուցակներում տեղի գտած կեղծիքների աստիճանը[36]: Թեսթը հիմնված է այն ենթադրության վրա, որ առանց մարդկային միջամտության, վերջին նիշերը պետք է համասեռ բաշխված լինեն 10 տոկոս հավանականությամբ, քանի որ ընդհանուր առմամբ կա տասը նիշ՝ 0-9: Թվային թեսթերը հիմնականում ծնվում մարդկային կողմնակալության՝ թերևս ընտրատարածքային հանձնաժողովի քարտուղարի կողմից, արհեստականորեն թվեր ստանալու արդյունքում: Հետևաբար, թվային ընտրակեղծիքը բյուրոկրատական կեղծիքի բացահայտ դրսևորում է[37]: Մեկ կուսակցությունից մյուսի օգտին ձայներ վերագրելն ընկնում է այս տեսակի կեղծիքի տակ: Գծապատկեր 4-ը ներկայացնում է անցկացված թեսթերի արդյունքները՝ հիմնվելով ընտրական տեղամասերի պաշտոնական արդյունքների վրա: Նպատակը, դարձյալ, իրական արդյունքը տեսական կանխատեսումների հետ համեմատելն է՝ տեսնելու, թե արդյոք՞ տարբերությունը վիճակագրական տեսանկյունից զգալի է, թե՞ ոչ:

---

[36] Սյոբերգն (Sjoberg, 2012a) օգտագործում է ընտրական տվյալներ Ադրբեջանից, Ղրղզստանից և Վրաստանից՝ ի ցույց դնելու ընտրակեղծիքների աստիճանը: Այլ ուսումնասիրություններ, որոնք կենտրոնանում են վերջին նիշի վրա ներառում են Բեբերին և Սկակոյին (Beber and Scacco, 2012) և Մեբանին ու Կալինինին (Mebane and Kalinin, 2009): Առաջին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին նիշի թեսթը պահանջում է բաշխման մասին թույլ ենթադրություններ՝ առաջարկելով, որ այս մեթոդը կարող է ավելի համապատասխան լինել ընտրակեղծիքը հայտնաբերելու, քան երկրորդ նիշերի վրա կենտրոնանալու հարցում:

[37] Այս թեսթն, այնուամենայնիվ, միայն ցույց է տալիս քվեների հաշվարկի հետ կապված ընտրակեղծիքը, ինչը ընտրակեղծիքների բազում ձևերից մեկն է միայն:

Գծապատկեր 4. Վերջին նիշերի բաշխումն ըստ ենթախմբերի (խորհրդարանական ընտրություններ 2012)

Ամբողջական պատկերը	Երևան (ընտրատարածքներ 1-13)
 Դիտարկումների թիվը=5,988 Իքսի քառակուսի մեծություն =22.9; *p*-մեծություն=0.0063	 Դիտարկումների թիվը=1,948 Իքսի քառակուսի մեծություն =11.9; *p*-մեծություն=0.2230
Երևանից դուրս (ընտրատարածքներ 14-41)	Երևանից դուրս (ընտրատարածքներ 27-41)
 Դիտարկումների թիվը=4,040 Իքսի քառակուսի մեծություն=17.6; *p*-մեծություն=0.04	 Դիտարկումների թիվը=1,942 Իքսի քառակուսի մեծություն=19.2; *p*-մեծություն=0.02

Աղբյուրը: ԿԸՀ և PFA-ի հաշվարկները: Ներառված են միայն եռանիշ հաշվարկները: Գիծը (մեծությունը՝ 10) մատնանշում է ակնկալվող համասեռ բաշխումը ձայների մաքուր հաշվարկի պարագայում: Փոթրիկ գծերը մատնանշում են 95 տոկոսանոց վստահության ինտերվալը յուրաքանչյուր առանձին նիշի համար:

Առաջին հերթին, մենք դիտարկում ենք ձայների հաշվարկի հետ կապված ընտրակեղծիքն իր ամբողջության մեջ (լրիվ ընտրանքը): Առաջին հարթությունը Գծապատկեր 4-ում հստակորեն ցույց է տալիս վերջին նիշի համակարգային շեղումները՝ համեմատած տեսական նախորդի հետ (այն է՝ մոտ 10 տոկոսանոց համասեռ բաշխում, տես հորիզոնական անընդհատ գիծը)[38]: Հետաքրքիր է, որ դիտարկած պատկերը համահունչ է «մարդկային թվի ստեղծման»՝ ի տարբերություն պատահական թվերի ստեղծման, պատկերին: Բոլանդն ու Հաթչինսոնը (Boland and Hutchinson, 2000) ցույց են տալիս, որ առաջարկվում են պատահականորեն ընտրել թվեր, մարդիթ նախընտրում է ցածր թվեր, մի պատկեր, որ տեսնում ենք Գծապատկեր 4-ի առաջին վահանակում: Այս հաշվարկները պատահական չեն արվել, այլ այն եղանակով, որ պաշտոնյաներն են *համարել* պատահական:

Երկրորդ, դիտարկումները բաժանում ենք երկուսի և դիտարկում Երևանում և Երևանից դուրս գտնվող ընտրատեղամասերը: Սա արվում է՝ ստուգելու այն վարկածը, որ Երևանի և այլ ընտրատարածքների միջև ձայների հաշվարկի հետ կապված ընտրակեղծիքների տարբերությունը կարող է զգալի լինել: Պետք է նշել, որ իրոք 2008թ. ընտրությունների ընթացքում Երևանի և Երևանից դուրս գտնվող ընտրատեղամասերի միջև զգալի տարբերություն կար ընտրակեղծիքի աստիճանի առումով (տես PFA, 2008):

Գծապատկեր 4-ի երկրորդ և երրորդ վահանակում ներկայացված արդյունքները համապատասխանում են կանխատեսումներին: Երևանում վերջին նիշերի բաշխումը համասեռից վիճակագրորեն տարբեր չի, ինչը թույլ է տալիս խոսել ձայների հաշվարկի հետ կապված աննշան ընտրակեղծիքների մասին[39]: Ի տարբերություն դրա՝ Երևանից դուրս գտնվող ընտրական տեղամասերում վերջին նիշերը շեղում են ցույց տալիս համասեռից, ինչը վկայում է ձայների հաշվարկի հետ կապված զգալի ընտրակեղծիքների մասին[40]: Ի լրումն քաղաքացիական/քաղաքական ակտիվիզմի մակարդակի հետ կապված տարբերության՝ Երևանում և Երևանից դուրս ընտրակեղծիքների այս մակարդակը կարող է տարբեր լինել նաև՝ կախված արտագաղթի պատկերից: Մասնավորապես այն պատճառով, որ գյուղական բնակավայրերից արտագաղթի մակարդակն ավելի մեծ է՝ Երևանի հետ համեմատ, ինչը կնշանակի, որ ընտրական պաշտոնյաների կողմից նույն մակարդակի ընտրակեղծիքների ապահովումը կպահանջեր ավելի շատ կեղծիքների: Այս վարկածը բավահայտում

---

[38] Իքսի քառակուսու թեսթի վիճակագրության մեծությունը 22.9 է (0.006-ի p-մեծությունը), ինչը ժխտում է զգալի մակարդակով համասեռ բաշխման հիպոթեզը:

[39] Իքսի քառակուսու վիճակագրությունը՝ 11.9 և *p*-մեծությունը՝ 0.223:

[40] Իքսի քառակուսու վիճակագրությունը՝ 17.6 և *p*-մեծությունը՝ 0.04:

է «բացակա քվեարկողների» թվի և ընտրակեղծիքների մեջ եղած խիստ կարևոր կապը:

Վերջապես, խուսափելու համար Chi-square վիճակագրական թեսթի զգայունության հետ կապված հնարավոր խնդիրներից՝ նույն թեսթն իրականացնելու նպատակով ընտրվել է ընտրական տեղամասերի մեկ այլ ենթաընտրանք: Մասնավորապես՝ 27-ից 41 ընտրատարածքները, որոնք նույնքան դիտարկումներ են ունեցել, որքան Երևանը (այն է՝ համապատասխանաբար 1942 և 1948): Չորրոդ վահանակի տվյալները նման են երրորդ վահանակի տվյալներին (այն է՝ "Երևանից դուրս"). այն է՝ վերջին նիշերը պարզորոշ կերպով շեղում են ցույց տալիս համասեռ բաշխումից, ինչը ևս ենթադրում է ձայների հաշվարկի հետ կապված կեղծիքներ[41]:

Ձայների հաշվարկի հետ կապված կեղծիքների մասին կային լուրջ ապացույցներ Հայաստանի 2008թ.-ի նախագահական ընտրությունների համատեքստում: Ինչպես նշել է Եվրոպական և եվրասիական հարցերի պետքարտուղարի օգնական Դենիել Ֆրիդը ԱՄՆ-ի Կոնգրսեի Արտաքին գործոց հանձնաժողովում իր վկայության ժամանակ. «ներկայացվել էին վերահաշվարկի դիմումներ, սակայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդներն արձանագրել էին բացթողումներ վերահաշվարկի գործընթացում, այդ թվում՝ տարբերություններ և սխալներ, որոնցից շատերը հարցականի տակ են դնում համապատասխան ընտրական հանձնաժողովների անկողմնակալությունը»: Մի այդպիսի դեպքում, որի մասին գրել է Հետք ինտերնետային կայքը, Երևանի թիվ 9/31 ընտրատեղամասում իրականացված վերահաշվարկի ժամանակ բացահայտվեց, որ նախնական հաշվարկի ժամանակ այլ թեկնածուների օգտին ստացված քվեները «տրամադրվել էին» Սերժ Սարգսյանին: Վերջնարդյունքը հարկ եղավ փոփոխել վերահաշվարկ անցած մի քանի ընտրական տեղամասերում ևս: Այդուհանդերձ, ինչպես նշում է PFA (2008; ծանոթագրություն 27), վերահաշվարկի ենթակա ընտրական տեղամասերի թիվը սահմանափակ էր՝ ելնելով թե օրենսդրական և թե վարչական կարողությունների նկատառումներից, ինչի հետևանքով կեղծված հաշվարկները մնում էին չբացահայտված:

Որպես ամփոփում, թեսթը ցույց է տալիս, որ Երևանից դուրս գտնվող ընտրատեղամասերում ձայների հաշվարկն ուղեկցվել է վիճակագրորեն նշանակալի ընտրակեղծիքներով: Այսպիսով, ձայների վերջնական հաշվարկը կեղծելն այն ուղիներից կարող էր լինել, որով իշխող կուսակցությունը 2012թ.-ին փոխարինեց նախկինում տարածված քվեատուփերի լցոնման երևույթը:

---

[41] chi-square վիճակագրություն՝ 19.2 և *p*-մեծություն՝ 0.02:

Ե. Ով է շահել ընտրակեղծիքների արդյունքում

Բացահայտելու, թե ով է շահել նախորդ բաժիններում քննարկած ընտրությունների մասնակիցների թվի ուռճացման ընտրակեղծիքից՝ օգտվում ենք մեկ այլ թեսթից, որն առաջարկում են Սոբիանինը և համահեղինակները, որը ուսումնասիրում է կապը առանձին թեկնածուների կողմից ստացված քվեների թվի և ընտրությունների մասնակցության միջև: Նրանք փաստարկում են, որ ընտրելու իրավունք ունեցող մասնակիցների թվում թեկնածուի ստացած ձայների թվի Հասարակ նվազագույն քառակուսու (ՀՆՔ/OLS) ռեգրեսիայի անկյունային գործակիցը պետք է դրական թիվ լինի, որը մեկից փոքր է և մոտ է այդ թեկնածուի կողմից ստացված քվեների մասնաբաժնին[42]: Եթե դրա արդյունքը հանդիսացող անկյունն ավելի մեծ է քան թեկնածուի ստացած մասնաբաժինը, սա կնշանակի (1) քվեատուփի լցոնում հօգուտ այդ թեկնածուի և/կամ (2) քվեարկողների մոբիլիզացիա նորմալ մասնակցությունից դուրս, ինչը կլինի անհամաչափորեն տվյալ թեկնածուի օգտին: Եթե արդյունքում անկյունն ավելի մեծ է մեկից, սա նշանակում է ոչ միայն այն որ տվյալ կուսակցությունը շահել է վերջնական հաշվարկի ժամանակ ավելացված քվեներից, այլ որ այն նաև շահել է այլ կուսակցություններից հանված քվեներից[43]:

Ստորև ներկայացված Գծապատկեր 5-ը պատկերում է թեկնածուների ստացած քվեների հարաբերակցությունն առանձին ընտրատեղամասերում կոալիցիոն երկու գործընկերների (ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի) և երկու ընդդիմադիր կուսակցությունների (ՀԱԿ-ի և Ժառանգության) համար: Այն նաև ներկայացնում է թեկնածուների ստացած քվեների ՀՆՔ/OLS ռեգրեսիան՝ մասնակցության և կոնստանտի վրա: Այս արդյունքները շատ հետաքրքիր են, քանի որ հաշվարկված հարաբերակցություններից և ոչ մեկը նման չէ նրա տեսականորեն կանխորոշված

---

[42] j -րդ թեկնածուի և i -րդ ընտրատեղամասի համար նկարագրված ռեգրեսիան կարող է ներկայացվել հետևյալ կերպ. (ներկայացման պարզության համար հաստատուն գործակիցը նշված չի). $V_{ij}/E_i = \beta_j \cdot T_i + \varepsilon_{ij} = \beta_j \cdot S_i/E_i + \varepsilon_{ij}$, որտեղ, V տվյալ թեկնածուի ստացած ձայների թիվն է, T-ն ընտրողների մասնակցությունը (սահմանվում է որպես S բաժանած E-ի), S-ը ընտրելու իրավունք ունեցողների թիվը, որոնք ներկայացել են ընտրատեղամաս քվեարկելու, իսկ E-ն ընտրելու իրավունք ունեցողների ընդհանուր թիվն է: ε -ը ռեգրեսիայի սխալն է: Կարելի է ցույց տալ, որ հետևյալ գնահատականի $\hat{\beta}_j = \sum_i V_{ij} / \sum_i S_i$ (j -րդ թեկնածուի հավաքած ձայների մասնաբաժինն է բոլոր ընտրատեղամասերում) մաթեմատիկական սպասումը հավասար է ՓՔԵ գնահատականի մաթեմատիկական սպասմանը ($E(\hat{\beta}_{jOLS}) = \beta_j$)՝գումարած փոքր շեղում:

[43] Այս հատուկ պատկերն է դիտարկվել 2008թ. նախագահական ընտրությունների ընթացքում Սերժ Սարգսյանի օգտին տրված ձայների պարագայում (տես PFA, 2008թ):

առժեքին, այն է՝չունի հաշվարկված գործակիցը, որը հավասար չէ ընտրությունների ժամանակ ստացված քվեների բաժնին:

Առաջին, ինչպես ցույց է տրված I վահանակում, ՀՀԿ-ի ռեգրեսիայի անկյունային գործակիցը 0.96 է՝ համեմատած 0.44 տեսական կանխորոշման հետ: Եթե ընդունենք, որ ընտրական տեղամասերի միջև չկան համակարգային տարբերություններ, այս արդյունքը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր 100 ավելի ընտրողից ընտրական տեղամասում ՀՀԿ-ն ստացել է մոտ 96 քվե: Այլ կերպ ասած՝ ՀՀԿ-ն համարյա միակ կողմն է, որ շահում է մասնակիցների ուռճացված թվից:

Երկրորդ, չնայած դրական, անկյունային գործակիցը ԲՀԿ-ի ռեգրեսիայում պակաս է, քան ընտրությունների ժամանակ ստացված ձայների թիվը (0.15 համեմատած 0.3 տեսական կանխորոշման հետ; Երկրորդ վահանակ): Սա ենթադրում է, որ ընտրական տեղամասում յուրաքանչյուր 100 ավելի ձայնից ԲՀԿ-ն ստանում է մոտ 15 ձայն, կամ միջինում իր ստացածի կեսը, ինչը նշանակում է ջանքեր ԲՀԿ-ից արհեստականորեն ձայներ շեղելու ուղղությամբ:

Երրորդ, ՀԱԿ-ի և Ժառանգության անկյունային գործակիցները բացասական են, ինչը նշանակում է, որ ոչ միայն նրանք չեն կարողացել մասնակիցների թվի ուռճացման պարագայում պահպանել ձայների իրենց մասնաբաժինը, այլ նաև կորցրել են դրանք: Սա վկայում է այս երկու կուսակցությունների նկատմամբ քվեատուփի լցոնման կամ ձայների արհեստական հաշվարկի տեսքով լայնածավալ ընտրակեղծիքների մասին:

Այս դիտարկումները ցույց են տալիս, որ ընտրությունների ժամանակ առկա մասնակցության ուռճացման հանգեցնող ընտրակեղծիքի միակ շահառուն ՀՀԿ-ն է եղել:

Գծապատկեր 5. Կուսակցության քվեների և մասնակիցների հարաբերակցությունը



Աղբյուրը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներ և PFA-ի հաշվարկներ: Դիտարկումների թիվը 1963 է:

ՀՀԿ/ընտրելու իրավունք ունեցող = -0.32 + 0.96*մասնակցություն
ԲՀԿ/ընտրելու իրավունք ունեցող = 0.08 + 0.15*մասնակցություն
ՀԱԿ /ընտրելու իրավունք ունեցող = 0.07 - 0.06*մասնակցություն
ԺԿ /ընտրելու իրավունք ունեցող = 0.09 - 0.09*մասնակցություն

V. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն զեկույցում կատարված վերլուծությունը վկայում է ընտրակեղծիքների հետևյալ տեսակների գոյության մասին, որոնք, միասին վերցված, ունակ էին փոփոխելու 2012թ.-ի ընտրությունների արդյունքները.

- Զանգվածային կերպով ուռճացված ընտրողների ցուցակներ և, արդյունքում, ուռճացված մասնակցության տոկոս,
- Ընտրակեղծիքների ձևերի փոփոխում, երբ ընտրական տեղամասերից դուրս կատարվող կեղծիքները, այդ թվում՝ ընտրակաշառքը, ահաբեկումը և կեղծ քվեարկությունը լայն տարածում են ստանում և
- Ձայների հաշվարկի հետ կապված էական ծավալի ընտրակեղծիքներ, որոնք հատկապես ակնառու են Երևանից դուրս գտնվող ընտրատեղմասերում:

Սույն զեկույցը ցույց է տալիս, որ մասնակցության ուռճացման հանգեցնող ընտրակեղծիքի հիմնական շահառուն իշխող կուսակցությունն է: Զեկույցում քննության առնված տվյալները ցույց են տալիս, որ ընտրակեղծիքների մեխանիզմները գնալով ավելի ու ավելի կատարելագործվում են, ինչը դժվարացնում է միջազգային դիտորդների կողմից դրանց հայտնաբերումն ու արձանագրումը և համահունչ է ահագնացող արտագաղթի և աճող սոցիալական բևեռացման հետ:

Մինչ վերոհիշյալ ընտրակեղծիքների համար մեղքի մեծագույն մասնաբաժինն ընկնում է իշխող ռեժիմի ուսերին, ընդդիմադիր կուսակցությունները ևս ունեն պատասխանատվության իրենց բաժինը: Կաթվածահար՝ ռեժիմի հուժկու փիառ համակարգից և անկարող՝ գտնելու նորարարական լուծումներ՝ նրանք չեն կարողանում կանխարգելել պետության անկումը *կակիստոկրատական* ուղով արժանահավատ ելք առաջարկելու միջոցով[44]: Ընտրությունից ընտրություն նրանք *դե ֆակտո* լեգիտիմացնում են խորապես արատավոր և միանգամայն կանխատեսելի գործընթացը՝ առանց առաջարկելու վստահելի այլընտրանքներ: Արդյունքում, ընտրությունները դարձել են խորապես անկարևոր և պետք է թերևս վերագնահատվեն իրավազուրկ մեծամասնության կողմից որպես պետության կառավարման գործնթացում մասնակցության միջոց:

---

[44] *Կակիստոկրատիա* [հին հունարեն κακιστος (*kakistos*, “”)], կառավարություն՝ կազմված ազգի վատագույն կամ ամենավատ որակավորում ունեցող քաղաքացիներից:

Այս զարգացումները հուսախաբ են արել քաղաքացիներին ընտրությունների հարցում և ստիպել են նրանց կամ ամբողջովին հրաժարվել դրանցից կամ փնտրել ոչ ավանդական ուղիներ ահագնացող քաղաքական ճգնաժամը հաղթահարելու համար[45]: Վերջերս անկախ մտավորականների և քաղաքացիական ակտիվիստների կողմից հռչակված 'նախախորհրդարանի' ստեղծումը, որը մի անկյունաքար է մոտ ապագայում անցկացվելիք այլընտրանքային ընտրությունների ոլորտում, կարող է լինել այն ելքը, որի ակնկալիքը հայ հասարակությունում ունեն շատերը:

Այդուհանդերձ, հասարակությունն ինքը պետք է փորձի գտնել ինքն իրեն: Ինչու՞ են մարդիկ վերցնում ընտրակաշառք և թույլ տալիս, որպեսզի իրենց ահաբեկեն մի կուսակցության ընտրելու համար: Եթե նրանք վերցնում են ընտրակաշառք, ի՞նչն է, որ թույլ չի տալիս նրանց ընտրելու այնպես, ինչպես իրենք են կամենում: Որքանո՞վ կարող է ընտրակաշառքի դիմաց տրված քվեն ազատ համարվել: Այն դեպքում, երբ ընտրակեղծիքներն արվում են հիմնականում ընտրական տեղամասերից դուրս և ընդունում կամավոր ձևեր, օրինակ՝ ձայներ գնելը, կարելի՞ է արդյոք կեղծված ընտրություններ անցկացնելու համար մեղքը բարդել միայն ընտրական վարչակազմի վրա: Ինչպե՞ս կարելի է խախտել ընտրակաշառքի մշակույթի և վատ կառավարման վերարտադրվող պարբերաշրջանը:

Մի բան պետք է անպայմանորեն հաշվի առնել. ավելի մաքուր ընտրությունների հասնելն ինքնանպատակ չէ: Առավել լավ ընտրությունները թերևս կհանգեցնեն առավել ամուր սոցիալական համերաշխության և առավել լավ կառավարման, որոնք զարգացման և առաջընթացի ամենակարևոր բաղադրիչներն են: 2012թ.-ի մայիսի ընտրություններից առաջ մեր հրապարակած զեկույցում (տես PFA, 2012թ.) նշվում է, որ.

> «Երկրին սպառնացող մարտահրավերներին արդյունավետ դիմակայումը պետք է սկսվի լեգիտիմ իշխանությունների ձևավորմամբ, որոնք կկարողանան Հայաստանի ժողովրդի անունից վերահսկել նոր քաղաքական կուրսը: Գալիք պառլամենտական ընտրությունը տալիս է հնարավորության այդ պատուհանը: Բնակչության կողմից իր ազատ կամքի դրսևորման և բարոյական արդարության մթնոլորտի ստեղծումը կնպաստի

[45] Ընդհանրացված և ինստիտուցիոնալ վստահության կատեգորիայում՝ ԵՎԶԲ-ի "Կյանքն անցումային շրջանում"զեկույցում Հայաստանի մասին ասվում է. "Պատասխանողների շրջանում վստահությունը կազմում է ընդամենը ութ տոկոս, ինչն ամենացածրն է անցումային տարածաշրջանում և 2006թ. մոտ քսան տոկոսից ընկել է: Վստահությունը հատկապես ընկել է երիտասարդների և միջին տարիքի անձանց, ինչպես նաև ազգաբնակչության ցածր եկամուտ ունեցող հատվածի մոտ":

հանրային վստահության ամրապնդմանը, որն այլ հավասար պայմաններում ձեռնարկվելիք միջոցառումները կդարձնի ավելի արդյունավետ»:

Սա տեղի չունեցավ: Սակայն, կարող է դեռևս վաղ է ամբողջությամբ գնահատել 2012թ.-ի ընտրությունների անդրադարձները Հայաստանի ապագայի համար: Մի բան պարզ է. ռեժիմի վարած քաղաքանության հանդեպ մարդկանց համբերությունը լցվում է և սա կարող է լինել փոթորկին նախորդող անդորրը:

Առաջարկություններ

Ընդդիմադիր կուսակցություններին և քաղաքացիական հասարակությանը

- «Բացակա ընտրողների» վերացման հարցը պետք է լինի առաջնահերթ: Այդուհանդերձ, ընտրություններից հետո ընտրողների ցուցակը հրապարակելու քաղաքական կամքի բացակայության պայմաններում (և հաշվի առնելով այս հարցի շուրջ սահմանադրական դատարանի դիրքորոշումը), կարելի է առաջ տանել այլընտրանքային լուծում, ինչը կպահանջի, որպեսզի արտասահմանում բնակվող և ճամփորդել չկարողացող քաղաքացիներին թույլ տրվի հանել իրենց անունները տեղական ընտրացուցակներից ***ժամանակավորապես ընտրությունից ընտրություն***[46]***:*** Այս կերպ հանված անձանց անունները պետք է հրապարակվեն՝ նվազեցնելու այդ ցուցակները կեղծելու հնարավորությունը:
- Ընտրողների ցուցակների հրապարակում այն ընտրական տեղամասերում, որտեղ մասնակիցների թիվը 90 տոկոսից ավելի է (այն է՝ անհավանական մեծ է): Սա ոչ միայն թույլ կտա ունենալ ուղղակի ապացույցներ ընտրակեղծիքների մասին այդ ընտրատեղամասերում (և թերևս դրանցից դուրս), բայց և որոշ չափով նաև կկանխարգելի կեղծիքները և կապաքաջալերի կոռումպացված ընտրական պաշտոնյաներին հասնել 90 տոկոսանոց արդյունքի, երբ նրանք իմանան, որ իրենց ստուգելու են:

Ընտրությունների արտասահմանցի դիտորդներին

- Չնայած ընտրակեղծիքները Հայաստանում ընդունում են տարբեր ձևեր, դրանք հարմարեցվում են դիտորդական ճնշումներին: Սա թելադրում է

---

[46] Կարիք չկա ասելու, որ այն անձինք, ովքեր հրաժարվել են ՀՀ քաղաքացիությունից պետք է մշտապես դուրս գան այդ ցուցակներից:

ընտրությունների անցկացման առավել անկեղծ գնահատական, հատկապես, երբ խոսքը գնում է առավել բարձր մակարդակներից ընտրակեղծիքների հովանավորչության մասին:

- Սրան առնչվում է նաև դիտորդների առավել լավ վերապատրաստումը Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակի, ինչպես նաև ընտրակեղծիքների պատմության ոլորտում:
- Ռեսուրսների առկայության պարագայում Երևանից դուրս գտնվող տեղամասեր պետք է ուղարկել ավելի մեծ թվով դիտորդներ, քանի որ այնտեղ ընտրակեղծիքների մասին ապացույցներն ավելի լուրջ են, քան Երևանում:

Սփյուռքին

- Հաշվի առնելով Հայաստանի առջև ծառացած մարտահրավերները և այն ազդեցությունը, որ մաքուր ընտրությունները կարող են ունենալ երկրի ապագայի վրա, ֆինանսական միջոցներ տրամադրելը ընտրությունների դիտարկմանը և անմիջականորեն դիտորդական առաքելություններին մասնակցելը կարող է ժամանակի և գումարի լավագույն օգտագործումը լինել[47]: Այդուհանդերձ, սփյուռքահայ դիտորդների մասնակցությունը պետք է արվի ավանդական Սփյուռքի կառույցներից անկախ եղանակով, քանի որ դրանց վրա ռեժիմի ազդեցությունը կարող է դեռ զգալի լինել:

[47] Ավելի հավանական է, որ սփյուռքահայ դիտորդներն ավելի լավ հասկանան տեղական առանձնահատկությունները, լեզուն և այն դերը, որն իրենք կարող են ունենալ Հայաստանի ապագայի համար:

Հավելված I. Ընտրակարգեր [48]

Ընտրակարգ	Մեծամասնական ընտրակարգ (ՄԸ)	Համամասնական ընտրակարգ (ՀԸ)
Սահմանում	Սա բազմակուսակցական ընտրակարգի ամենապարզ ձևն է: Հաղթում է այն թեկնածուն, ով ստանում է ավելի շատ ձայներ, քան մնացածը, նույնիսկ եթե դա վավեր ձայների բացարձակ մեծամասնությունը չէ: Ընտրակարգի համար անհրաժեշտ են միամանդատ ընտրատարածքներ, որտեղ ընտրողները քվեարկում են թեկնածուների, այլ ոչ՝ կուսակցությունների օգտին:	Այս ընտրակարգով յուրաքանչյուր կուսակցություն կամ դաշինք ներկայացնում է թեկնածուների ցուցակ բազմամանդատ ընտրատարածքի համար, ընտրողները քվեարկում են կուսակցության օգտին, իսկ կուսակցություններն ստանում են տեղեր՝ ստացած ձայներին համապատասխան: Թեկնածուները հաղթում են ըստ կուսակցության ցուցակում իրենց զբաղեցրած դիրքի:
Առավելություններ	• Ապահովում է հստակ ընտրություն երկու կուսակցությունների միջև, • Հնարավոր է դարձնում միակուսակցական կառավարության կազմավորումը, • Հնարավոր է դարձնում կոհերենտ ընդդիմություն օրենսդիր մարմնում, • Բացառում է ծայրահեղական կուսակցությունների օրենսդիր մարմնում ներայացված լինելը, • Խթանում է կապը ընտրողների և նրանց ներկայացուցիչների միջև, քանի որ արդյունքում ձևավորվում է օրենսդիր մարմին՝ կազմված աշխարհագրական տարածքների ներկայացուցիչներից: • Թույլ է տալիս ընտրողներին	• Ճշգրտորեն վեր է ածում տրված ձայները տեղերի, • Խրախուսում է կամ պահանջում է նման մտածողություն ունեցող թեկնածուներից կազմված կուսակցություններին կամ դաշինքներին առաջադրել ցուցակներ: Սա կարող է հստակեցնել հասարակությունում առկա գաղափարախոսական, քաղաքական կամ առաջնորդական տարբերությունները, • Շատ քիչ թվով ձայներ են կորում, • Հնարավորություն է ընձեռում փոքրամասնություն ներկայացնող կուսակցություններին մտնելու օրենսդիր մարմին,

[48] Հիմնված է ACE Electoral Knowledge Network.-ից ստացված տեղեկությունների վրա:

	ընտրություն կատարելու մարդկանց, այլ ոչ՝ կուսակցությունների միջև, • Թույլ է տալիս հանրությանը հայտնի անկախ թեկնածուների ընտրվելու, • Հեշտ է կիրառելու և ընկալելու տեսանկյունից: Վավեր ձայնի համար պահանջվում է նշում կատարել թեկնածուի անվան կամ խորհրդանիշի կողքը:	• Խրախուսում է կուսակցություններին քարոզչություն իրականացնել այն ընտրատարածքներից դուրս, որտեղ նրանք ուժեղ են կամ որտեղ սպասվում է, որ արդյունքները մոտ կլինեն, • Սահմանափակում է 'Տարածքային կլանների' առաջացումը, • Հանգեցնում է քաղաքականության առավել մեծ շարունակականության և կայունության, • Առավել տեսանելի է դարձնում իշխանության բաժանումը կուսակցութունների և շահագրգիռ խմբերի միջև:
Բացասական կողմեր	• Բացառում է ավելի փոքր կուսակցությունների մուտքը, • Բացառում է փոքրամասնություններին: Որպես կանոն, կուսակցություններն առաջադրում են առավել ընդունելի թեկնածուին որևէ ընտրատարածքում՝ թույլ չտալու ընտրողների մեծամասնության օտարում, • Բացառում է կանանց ներկայացվածությունն օրենսդիր մարմնում: 'Առավել ընդունելի թենկածուի' սինդրոմը նույնպես ազդում է օրենսդիր մարմնում կանանց ընտրվելու վրա, քանի որ հավանական չէ, որ նրանք ընտրվեն տղամարդկանց գերակշռությունը վայելող կուսակցական կառույցների կողմից, • Խրախուսում է կլանի, էթնիկ ծագման կամ տարածքի վրա հիմնված կուսակցությունների	• Կոալիցիոն կառավարություններ, որոնք իրենց հերթին հանգեցնում են օրենսդրական փակուղու և կոհերենտ քաղաքականու-թյուններ իրականացնելու անկարողության, • Իշխող կոալիցիաներ, որոնք չունեն բավարար ընդհանրություններ իրենց քաղաքականությունների կամ աջակից բազայի առումով, • Կուսակցական համակարգի ապակայունացնող մասնատում, • Փոքր կուսակցություններ, որոնք ստանում են անհամաչափ ավելի շատ իշխանություն, • Քվեարկողի կողմից հաշվետվողականություն պարտադրելու կարողություն՝ կուսակցությանն իշխանանկ անելու կամ թեկնածուին պաշտոնանկ անելու միջոցով, • Քվեարկողների համար

	զարգացմանը, որոնք կարող են հիմնել իրենց քարոզարշավը և քաղաքական ծրագրերը այնպիսի հասկացությունների վրա, որոնք գրավում են այդ ընտրատարածքի բնակչության մեծամասնությանը, սակայն բացառվում են կամ թշնամաբար են ընկալվում մյուսների կողմից: • Ուռճացնում է 'տարածքային կլանների' երևույթը, որտեղ մի կուսակցություն հաղթում է տվյալ տարածքի բոլոր տեղերը, • Մեծ թվով ձայներ են վատնվում, որոնք չեն գնում որևէ թեկնածուի օգտին, • Կարող են անտարբեր մնալ հանրային կարծիքի փոփոխությունների նկատմամբ և կախված են ընտրական սահմաններ գծելուց:	դժվարություններ՝ հասկանալու կամ ընտրական վարչակազմի համար իրականացնելու համակարգի երբեմն բարդ կանոնները, • Թույլ կապեր ընտրյալ ներկայացուցիչների և ընտրողների միջև, • Իշխանության ծայրահեղ արմատավորում կուսակցական կենտրոնների և ավագ առաջնորդների ձեռքերում, • Ինչ-որ տեսակի ճանաչված կուսակցական կամ քաղաքական խմբավորումների գոյության անհրաժեշտություն:
Օրինակներ/պետ.	Ադրբեջան, Կանադա, Հնդկաստան, ՄԹ, ԱՄՆ և շատ այլ ՄԹ գաղութներ:	ԵՄ-ի մի շարք անդամ պետություններ, Ռուսաստան, Թուրքիա, ՊՀ որոշ պետություններ:

Հավելված II: Հայտնի ակտիվիստների՝ թանաքի թերությունների հետ կապված զեկույցները սոցիալական մեդիայում

Դավիթ Սանասարյան

ԱՀԱԶԱՆԳ: Ընտրատեղամասում անձնագրի վրա դրվող կնիքը բավական հեշտությամբ ջնջվում է մի փոքր այն տրորելու դեպքում: Սա հավաստի ինֆորմացիա է

Արմեն Հովհաննիսյան

Թանաքը աչքիդ առաջ ջնջվում է: ԱՀԱԶԱՆԳ: Շատ լուրջ խնդիր է: The ink on stamp is disappearing in a minutes! #armvote

Լևոն Բաբսեղյան

Գյումրու մի քանի տեղամասերից ահազանգեր ունեմ, որ անձնագրի կնիքի դրոշմը ցնդում է 20-30 րոպեից 34/18-ում որոշել են դադարեցնել, մոտ 20 րոպե ընտրություն տեղի չի ունեցել, 08:50-ին զանգել են ԿԸՀ, որտեղ հանձնարարել են շարունակել քվեարկությունը անկախ այն հանգամանքից որ դրոշմը ցնդում է: Քվեարկությունը այդ տեղամասում շարունակվում է:

Գյումրի 34/4, թիվ 11 դպրոցի շենք08:20 թանաքը 20 րոպեից վերացել է

Գյումրի 34/7, թիվ 18 նախակրթարանի շենք
Կնիքները ցնդում են անձնագրերի միջից: ԿԸՀ-ից ասել են շարունակեք, դա ձեր խնդիրը չէ:
9:00 ԿԸՀ-ից հանձնարարել են այդ թանաքը փոխաչրինել սովորական թանաքով:

Գյումրի 34/8, թիվ 37 դպրոցի շենք
08:25-Կնիքը վերացել է 20 րոպեից:

Գյումրի 34/18, թիվ 4 դպրոցի շենք
08:40-Կնիքները ցնդում են անձնագրերից, հանձնաժողովը որոշել է դադարեցնել ընտրությունները: ԿԸՀ-ից 08:50-ին հանձնարարել; են շարունակել քվեարկությունը, անկախ այն հանգամանքից որ դրոշմը ցնդում է: Մինչ այդ 20 րոպեով հանձնաժողովի որոշմամաբ քվեարկությունը դադարեցված է եղել:

Գյումրի 34/22, թիվ 7 դպրոցի շենք
08:25- Միջադեպ դիտորդների եւ վստահված անձանց միջեւ:
ՀԱԿ-ի վստահված անձինք ստուգում են քվեարկածների անձնագրերը
9:05 Կռիվ երկու մեծամասնական թեկնածուների ներկայացուցիչների միջեւ:

Գյումրի 34/23, Պետական Բժշկական քոլեջի շենք
08:12-ԲՀԿ-ն կամեցել է տեսախցիկ տեղադրել, ծեծկռտուք են սարքել, թույլ չեն տվել տեսախցիկ տեղադրել:

Հավելված III. Դիտորդների ազդեցության տնտեսաչափական գնահատում

Այս բաժինը ներկայացնում է այն նախնական տվյալները, որոնք հիմք են հանդիսացել 1-ի տեղեկատվական ակնարկի հաշվարկների համար: Կախյալ փոփոխականը ռեգրեսիաներում իշխանական թեկնածուի մասնաբաժինն է (2003թ.-ի ընտրությունների առաջին փուլի և 2008թ.-ի նախագահական ընտրություններում): Հիմնական բացատրական փոփոխականը (*Դիտարկված*) ընդունում է 1 մեծությունը, եթե ընտրական տեղամաս այցելել է միջազգային դիտորդ և 0, եթե ոչ: Ներդնելով բացատրական փոփոխական՝ *Երևան,* որն ընդունում է 1 մեծությունը, եթե ընտրական տեղամասը գտնվում է Երևանում և 0, եթե ոչ. այս կերպ մենք վերահսկում ենք ժողովրդագրական բնութագրիչների տարբերությունները (օրինակ՝ կրթությունը և ակտիվիզմը) և Երևանի և Երևանից դուրս գտնվող բնակավայրերից արտագաղթի չափերը:

Աղյուսակ A1: Ռեգրեսիայի արդյունք

	Կախյալ փոփոխական՝ Ռ. Քոչարյանի մասնաբաժինը (2003, 1-ին փուլ)		*Կախյալ փոփոխական՝* Ս. Սարգսյանի մասնաբաժինը (2008)		
	I (OLS)	II (OLS)	III (OLS)	IV (OLS)	V (IVREG)
Դիտարկած	-0.06	-0.02	-0.06	-0.045	-0.10
	(-5.92)***	(-2.00)**	(-7.80)***	(-5.96)***	(-1.66)*
Երևան		-0.16		-0.14	-0.13
		(-13.51)***		(-15.13)***	(-10.35)***
Կոնստանտ	0.54	0.56	0.58	0.60	0.63
R-քառակուսի	0.02	0.11	0.03	0.13	0.11
Ընտրատեղամասերի թիվը	1,764	1,764	1,923	1,923	1,923

(***), (**), և (*) մատնանշում են վիճակագրական նշանակելիությունը 1, 5, և 10 տոկոսային մակարդակով, համապատասխանաբար:

I սյունակի արդյունքն ըստ էության կրկնում է Հայդի (Hyde, 2007) շրջադարձային ուսումնասիրության արդյունքը՝ ցույց տալով, որ դիտորդները միջինում նվազեցրել են Քոչարյանի կողմից առաջին փուլում ստացած քվեները 6 տոկոսով: Ինչպես նշված է ուսումնասիրության մեջ, մտահոգությունները դիտարկման ենթակա ընտրատեղամասերի հնարավոր էնդոգենության մասին փարատվել են,

քանի որ ընտրությունը կատարվել է պատահականորեն[49]: Երևանի ազդեցության առնելուց հետո «դիտորդների ազդեցությունը» 2003թ.-ին նվազում է 2 տոկոսի (II սյունակ):

Հետաքրքրարժան է, որ 2008թ.-ի ընտրությունների դիտարկման ընդհանուր ազդեցությունն անփոփոխ է. Սերժ Սարգսյանի կողմից ստացված ձայների թիվը 6 տոկոսով պակաս է դիտորդների այցելած ընտրատեղամասերում՝ համեմատած այն ընտրատեղամասերի հետ, որտեղ դիտորդներ չեն այցելել (III սյունակ): Այդուհանդերձ, 2003թ.-ի հետ համեմատ՝ ազդեցությունն ավելի բարձր է, երբ Երևանի ազդեցությունը հաշվի է առնվում. ազդեցությունը 4.5 տոկոս է 2008թ.-ի ընդդեմ 2003թ.-ի 2 տոկոսի (IV սյունակ):

2008թ.-ի դիտարկման ենթակա ընտրատեղամասերի ընտրության հնարավոր էնդոգենությունը վերահսկելու նպատակով (եթե ընտրատեղամասը դիտարկելու որոշումն ընդունվել է հաշվի առնելով գործոններ, որոնք կապված են ընտրակեղծիքների աստիճանի հետ), կիրառվել է instrumental variables ռեգրեսիայի մեթոդոլոգիան (IVREG): Այս նպատակով օգտագործել ենք հետևյալ երկու փոփոխականները. (1) Երևանից ընտրատարածք ընկած հեռավորությունը (կիլոմետրերով) և (2) այն ընտրական տեղամասերի միջին թիվը, որն այցելել են դիտորդները մի որևէ ընտրատարածքում նախորդ նախագահական ընտրությունների ժամանակ (2003թ)[50]:

Վերջապես, հաշվի առնելով ընտրանքի տարբեր տեղանքներում դիտարկած տարբերությունները, ինչպիսիք են Երևանում և Երևանից դուրս գտնվող ընտրական տեղամասերը՝ ընտրել ենք generalized method of moments (GMM) մեթոդի տարբերակը IVREG-ում՝ ուղղելու սխալների հնարավոր հետերոսկեդաստիկությունը: GMM-ը թույլ է տալիս հասնելու արդյունավետ հաշվարկի անհայտ տեսակի հետերոսկեդաստիկության պարագայում (տես Բաում և Շաֆեր (2002) քննարկման համար)[51]: Հաշվարկի համար օգտագործված STATA հրամանը հետևյալն է.

ivregress gmm sargsyanshare Yerevan (observed=distance 2003observedaverage)

---

[49] Վերջին խնդիրը կարող էր ծագել, եթե, օրինակ, դիտորդների կողմից դիտարկվեին այն ընտրատեղամասերը, որտեղ ապրիորի իշխանական թեկնածուի ձայների մասնաբաժինն ավելի մեծ է:

[50] Երկու գործիքներն էլ ունեն կանխատեսված նշաններ ռեգրսեիաների առաջին փուլում և վիճակագրության տեսանկյունից մեծապես կարևոր են:

[51] Օգտագործելով **2sls** տարբերակն **ivregress-ում gmm-ի** փոխարեն հանգեցնում է փոքր-ինչ ավելի փոքր գործակցի դիտարկածների մասով (0.08), սակայն ավելի մեծ վիճակագրական շեղումով, ինչը հարցականի հատ է դնում գործակցի վիճակագրական նշանակելիությունը: Արդյունքները կարող են տրամադրվել:

V սյունակում (Աղյուսակ A1) ներկայացված IVREG արդյունքները ցույց են տալիս ավելի մեծ «դիտորդների ազդեցություն», քան OLS-ինը՝10 տոկոս 4.5 տոկոսի համեմատ, այն աստիճանի, որ եթե արտասահմանցի դիտորդները դիտարկեին Հայաստանի բոլոր ընտրական տեղամասերը (դրանց 52 տոկոսի փոխարեն), 2008թ. նախագահական ընտրությունները կարող էին խիստ անկանխատեսելի լինել:

Հղումներ

Baum, C. and M. E. Schaffer, 2002. "Instrumental variables and GMM: Estimation and testing," Boston College Economics Working Paper 545, November.

Beber, B. and A. Scacco, 2012. "What the Numbers Say: A Digit-Based Test for Election Fraud," *Political Analysis*; April. Available from here.

Boland, P. J. and K. Hutchinson, 2000. "Student Selection of Random Digits," *Journal of the Royal Statistical Society: Series D,* 49**,** 519-529.

Hyde, S., 2007. "The Observer Effect in International Politics: Evidence from a Natural Experiment", *World Politics* 60(37).

Institute for War and Peace reporting, 2012a. "Armenian Parties Make Lavish Jobs and Pay Pledges," April 27. Available from here.

Institute for War and Peace reporting, 2012b. "Opposition Alleges Irregularities in Armenian Polls," May 11. Available from here.

Klimek, P., Y. Yegorov, R. Hanel, and S. Thurner, 2012. "It's Not the Voting That's Democracy, It's the Counting: Statistical Detection of Systematic Election Irregularities". *Physics and Society*, January. Available from here.

Mebane, W. and K. Kalinin, 2009. "Comparative Election Fraud Detection," MPSA Annual Meeting. Chicago.

Policy Forum Armenia, 2012. "Armenia" Averting an Economic Catastrophe," PFA Special Report, February. Available from here.

Policy Forum Armenia, 2009. "Yerevan's 2009 Municipal Election: Statistical Analysis," PFA Special Report, September. Available from here.

Policy Forum Armenia, 2008. "2008 Armenia's Presidential Election: Select Issues and Analysis," PFA Special Report, July. Available from here.

Schedler, A. 2002. "The Menu of Manipulation," *Journal of Democracy* 13(2): page 44-45. Available from here.

Sjoberg, F., 2012a. "Making Voters Count: Evidence from Field Experiments about the Efficacy of Domestic Election Observation", Columbia University mimeo, August; Available from here.

Sjoberg, F., 2012b. "Autocratic Adaptation: The Strategic Use of Transparency and the Persistence of Election Fraud", Columbia University mimeo, June; Available from here.

Sobianin, A. and V. Sukhovolskiy (1993). Elections and the Referendum December 12, 1993 in Russia: Political Results, Perspectives and Trustworthiness of the Results," unpublished report to the Administration of the President of the Russian Federation, Moscow, 1993; as reported in Myagkov, Ordeshook, and Shakin (2005).

Sobianin, A., E. Gelman, and O. Kaiunov (1994). "The Political Climate of Russia's Regions: Voters and Deputies, 1991-93," *The Post-Soviet Review* 21, No. 1.

Vickery, C. and E. Shein, 2012. "Assessing Electoral Fraud in New Democracies: Refining the Vocabulary", IFES White Paper Series, May. Available from here.